

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՉՅԱՆ

ԲՈՒԿՐԴՈՒՐԻ ԲԱՐԲԱՌԸ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1971



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

НЕРСЕС МКРТЧЯН

БУРДУРСКИЙ ДИАЛЕКТ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1971

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՇ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԻԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՅԱՆ

ԲՈՒՐԴՈՒՐԻ ԲԱՐԲԱՌԷ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՇ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՆՐԻՇԱՆ 1971

Աշխատությունը նվիրված է Փոքր Ասիա թերակղզու հուրդուր քաղաքի հայ համայնքի բարբառի ուսումնասիրությանը: Աշխատության մեջ մանրամասնորեն քննված են բարբառի հնչյունաբանությունն ու ձևաբանությունը, բառապաշարն ու նրա շերտերը: "Հավելվածներ" բաժնում տրված են բանահյուսության և բարբառային տեքստերի նմուշներ: Աշխատությունն ունի բարբառային բառերի բառարան և զրաբառից բարբառ բառացանկ:

Գիրքը կարող է Օգտակար լինել հայ բարբառագիտության և ընդհանրապես հայոց լեզվի հարցերով զբաղվողների, ինչպես նաև հայ բանահավաքների համար:

Работа посвящена изучению одному из диалектов арм. языка города Бурдур в Малой Азии. В работе детально изучены фонетические и морфологические явления данного диалекта и состав словарного состава. В разделе «Приложения» даны образцы фольклора и тексты бурдурского диалекта.

Книга имеет словарь диалектных слов и список слов из грабара на бурдурский диалект.

Книга может быть полезна для изучающих армянские диалекты и вообще армянский язык, а так же его фольклор.

Բուրդուրի բարձրագույն հայերենի դեռևս գիտական ուսումնասիրության չենթարկված բարձրադասից է:

Այս բարձրագույն է խոսել Արևմտյան Անատոլիայի Բուրդուր քաղաքի հայ համայնքը, մինչև 1915թ. մեծ եղեռնը:

Բուրդուրի բարձրագույն որոշ գծերով մոտ է դարաբաղյան միջավայրի "ուսմ" ծյուղի բարձրադասին, սակայն հնչյունաբանական ու ձևաբանական մի շարք առանձնահատկություններով (նաև բառապաշարով) զգալիորեն տարբերվում է նրանցից:

Այս բարձրագույն արդեն պետք է դասել մահացած հայ բարձրադասների շարքը, որովհետև շարժերից փրկված սակավաթիվ բուրդուրցիներն այժմ ցրված են աշխարհի տարբեր երկրներում (Ֆրանսիա, Հունաստան, Լիքսնան և այլուր) և բարձրագույն օգտագործում են ոչ բուրդուր, այլ միայն տարեց մարդիկ՝ միմյանց հետ խոսելիս: Հայրենադարձված բուրդուրցիների մի մասը (մոտ 40 ընտանիք) ներկայումս բնակություն է հաստատել Երևան քաղաքում:

Ներկա ուսումնասիրության համար հիմք է ծառայել Երևանում բնակություն հաստատած տարեց բուրդուրցիների կենդանի խոսվածքը: Այդ բուրդուրցիների օգնությամբ կազմել ենք բարձրագույն գործածական բուրդուր բառերի բառացանկը, զրի ենք տել ու ձայնագրել նրանց զրույցներն ու ժողովրդական բանահյուսության նմուշները:

Օգտվելով առիթից՝ մեր երախտագիտական խոսքն ենք ուղղում բուրդուրցիներին, ովքեր այս կամ այն չափով օժանդակել են ու նպաստել սույն ուսումնասիրության ամբողջացմանը՝ քաջ գիտակցելով այն փաստը, որ 1915թ. եղեռնին զոհ դարձած իրենց անշիրիմ հայրենակիցների հիշատակին նվիրված մի համեստ պատկ է դառնալու "Բուրդուրի բարձրագույն"ը:

Առանձնապես անշահախնդիր ու անձանձրույթ օգնություն են ցույց տվել հետևյալ բուրդուրցիները՝

1. Համբարձումյան Գեորգի Մկրտչի (ծն. 1886թ.)
2. Համբարձումյան Սիրանուշ Սարգսի (ծն. 1906թ.)
3. Թևոսյան Մարիամ Գրիգորի (ծն. 1885թ.)
4. Մարտիրոսյան Խաչատրի Մկրտչի (ծն. 1895թ.)
5. Գուլումջյան Սրբուհի Ավետիսի (ծն. 1886թ.)
6. Գուլումջյան Կարապետ Սարգսի (ծն. 1901թ.)
7. Դարաբաղյան Աննա Հովհաննեսի (ծն. 1864թ.)
8. Սուլթանյան-Առաքելյան Եղիսաբեթ Մկրտչի (ծն. 1892թ.)
9. Բոգիկյան Աննա Անուշավանի (ծն. 1900թ.)

Խիստ արժեքավոր վիճակագրական փաստեր ու տեղեկություններ է հաղորդել մեզ նաև թոշակառու ուսուցիչ, հանգուցյալ Հաջիյան Արմենակը (1882-1968), որին նույնպես մեծ երախտագիտությամբ ենք հիշում մենք:

Ներկա ուսումնասիրությունը բաղկացած է հիմնականում 5 բաժնից՝ "Ներածություն", "Հնչյունաբանություն", "Ձևաբանություն", "Բառագիտություն" և "Հավելվածներ": "Ներածություն" իր հերթին բաղկացած է նրկու բաժիններից՝ ա) "Տեղեկություններ Բուրդուրի գաղթօջախի մասին", ուր տրված են եղած վիճակագրական տեղեկությունները, բ) "Բուրդուրի բարբառը կամ ըւմ մյուղի բարբառը կը մյուղի միջավայրում", ուր բարբառների փոխազդեցության և նոր բարբառների գոյացման հարցերի քննության մի փորձ է արված:

"Հնչյունաբանություն" բաժնում, համեմատության եզր ընդունելով գրաբարի հնչյունական համակարգը՝ քննարկել ենք բարբառի հնչյունների փոփոխությունները:

"Ձևաբանություն" բաժնում նկարագրված են բարբառի ձևաբանական օրինաչափությունները:

"Բառագիտություն" բաժնում քննված են բարբառի բառազանձի շերտերը:

"Հավելվածներ" բաժինը նույնպես բաղկացած է երկու մասից, դրանք են՝ ա) "Գրաբարից բարբառ" և "Բուրդուրի բարբառից աշխարհաբար" բառաբաններ, բ) Բուրդուրի բանահյուսության և բարբառային տեքստերի նըմուշներ, որոնք և հիմք են ծառայել հիմնական ուսումնասիրության համար:

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՏՈՂԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒՐՊՈՐՏԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՆԱԽ ՄԱՍԻՆ

Բուրդուրի հայ գաղթօջախը գտնվում է Փոքր Ասիա թաղակցու հարավ-արևմուտքում՝ Բուրդուր լճի արևելյան ափին: Այն հիմնադրվել է 17-րդ դարի սկզբին: Որոշ վերապահությամբ այս ընդունում է նաև ակադ. Հ. Ամատյանը. "Պուրտուր և էօտէմիշ գաղթել են Ղարաբաղից ժէ դարում կամ ավելի ուշ" ¹:

Բուրդուրցիների բանավոր ավանդություններում հիշատակված փաստերը նույնպես համընկնում են այս ժամանակաշրջանին: Նրանք պատմում են, որ իրենց պապերը Թուրքիա են գաղթել Պարսկաստանից՝ Շահ Աբասի հատուկ թույլտվությամբ ("ֆերմանով") "մեծ սովից" հետո: Անշուշտ, խոսքը 1607 թվականի երկրորդ "մեծ սովի" մասին է, քանի որ առաջին "մեծ սովի" ժամանակ՝ 1577 թվականին, Շահ Աբասի բռնազաղթը դեռևս տաղի չէր ունեցել: Այդ ֆերմանի մասին մեզ զբոսք բուրդուրցի ֆիլիպոս Առաքելյանը՝ Բսյրուբից, որի ընտանիքում մինչև 1915թ. եղածներ գտնվել էր Շահ Աբասի ֆերմանի պատճենը, սակայն դժոխային տարիներին՝ ջարդերի ու անհույս դեպքերումների ժամանակ, այդ թանկարժեք փաստաթուղթը կորել է:

Այսպիսով, եթե Բուրդուրի գաղթօջախի հիմնադրման սկիզբը համարենք մոտավորապես 1610 թվականը, ապա մինչև 1915թ. նրա զոյությունը կկազմի շուրջ 300 տարվա մի շրջան:

Ըստ բուրդուրցի ուսուցիչ Հաջիյան Արմենակի հաղորդած տվյալների՝ մինչև եղածներ՝ Բուրդուրի հայ գաղթօջախն ունեցել է ավելի քան 850 ընտանիք՝ մոտ 2,500 մարդով:

Բ Ո Ւ Ր Դ Ո Ւ Ր Ի

Բ Ա Ր Բ Ա Ռ Ը

Առաջին անգամ Բուրդուրի քարքառի մասին տեղեկություններ է հաղորդել ակադ. Հ. Ամատյանը 1911թ. լույս ընծայած իր "Հայ քարքառագիտություն" գրքում:

"Փոքր Ասիոյ Զմիւռնիայի և Այտընի քովերը հին հայ գաղթականութիւն մը կայ, որ մէկ երկու դար առաջ Ղարաբաղէն հեռանալով այս տեղսը հաստատուէր է: Թէև յիշեալ գաղթականութեան մեծագոյն մասը տաճկախօս դարձած է, բայց երկու տեղ, այն է՝ Պուրտուր և էօտէմիշ, դեռ իրենց մայրենի քարքառը անկորուստ կը պահեն" ²):

1. Հ. Ամատյան, Հայ քարքառագիտություն, Մոսկվա, Նոր Նախիջևան, 1911, էջ 61:

2. Հ. Ամատյան, Հայ քարքառագիտություն, Մոսկուա-Նոր-Նախիջևան, 1911, էջ 6:

Այս հատվածն անփոփոխ բովանդակությամբ /թեև արդեն արեւելահայ
լեզվով/ զետեղված է նույն հեղինակի "Հայոց լեզվի պատմություն"
2-րդ հատորում¹ քառասունմեկ տարի հետո:

1922թ. Քեոդիկի "Ամենայն տարեցոյցում" տպագրված Հ.Ամառյանին
ուղղված մի նամակից տեղեկանում ենք, որ Բուրդուրի բարբառը նրա
"ուսումնասիրութեանց մասնակի առարկան" է եղել, սակայն ինչ-ինչ
պատճառներով մնացել է անավարտ: Այսպես սիրելի վարպետ...

Սա միայն ըսեմ, որ այսքան բարբառներու մեջ ամենէն զարմանալին
ինծի թուէցաւ Ապարթա-Պուրտուրինը. ունկնդիրը կը կարծէ, որ բոլո-
րովին օտար անծանոթ լեզու մըն է, որ կը խօսին: Հստ իրենց աւան-
դութեան Ղարաբաղի բարբառն է, 300 տարի առաջ Ղարաբաղէն զաղթէր են
և բարբառը պահեր են այնքան հարազատօրէն ու անաղարտ: Գիտեմ, դուք
այդ բարբառը շատ կը սիրէք և ձեր ուսումնասիրութեանց մասնակի առար-
կայ ըրած եք:

Ուրիշ առիթով եւս գրելու խոստումով՝ Ձերդ Կ.Գաբրիկեան:" 2

Այս վկայութիւններից բացի, Բուրդուրի կամ Օղեմիշի բարբառով
հրապարակված նմուշներ չկան:

Բուրդուրի բարբառից ընդամենը 12 բառ է զետեղված նույն հեղինակի
"Հայերէն Գաւառական բառարանում",³ որոնցից 3-ը Բուրդուրցիների
համար այդպես էլ մնացին իբրև անստույգ բառեր/իրիկնայ "ծրի", խլուակ
"ծակ կամ պատի միջի անցք", քուկի "օրորան"/:

Այնուամենայնիվ, վերոհիշյալ աշխատություններում, Ղարաբաղի բար-
բառի տարածման սահմանները թվարկելիս, ակադ. Հ.Ամառյանը Բուրդուրը
և Օղեմիշը անվերապահորեն մացնում է այդ բարբառի տարածման ոլորտի
մեջ: Այսինքն՝ այդ զաղթողների բարբառները նույնացնում են Ղարա-
բաղի բարբառի հետ: Մինչդեռ մեր ուսումնասիրություններից պարզվեց
հետևյալը.

ա. Բուրդուրն ու Օղեմիշը, իբրև "ղարաբաղյան" ծագում ունեցող
զաղթողներ, բացառություն չեն եղել Արևմտյան Անատոլիայում, և
նման զաղթողների թիվը շուրջ տասնհինգն է՝ Անթալյա, Բուլու, Գա-
սթա, Դենիզլի, Դիյնար, Դովրեկ, Դուզլե, Ջոնզուլդադ, Էլմալու, Էրեյլի,
Խփարթա, Նազիլլի, Զըրք-Աղաջ:

1. Հ.Ամառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ հատոր, Երևան,
1952, էջ 332,

2. Քեոդիկ, "Ամենայն Տարեցոյցը", ԺՋ տարի, 1922, Կ.Պոլիս,
էջ 326:

3. Հ. Ամառեան, Հայերէն Գաւառական բառարան, 1913, Քիֆլիս:

բ) դեռևս 19-րդ դարի վերջերին Օդեսի զաղթօջախում (և վերոհիշյալ վայրերից մի քանիսում) բարձր աղյուս կազմավորված վիճակում է եղել և իբրև խոսակցական լեզու այնտեղ օգտագործվել է կամ պաշտոնական-պետական թուրքերենը, կամ դարձյալ ուսուցվող արևմտահայ գրական լեզուն:

գ) ի տարբերություն Օդեսի Քուրդուրում (ինչպես նաև վերոհիշյալ զաղթօջախներից մի քանիսում՝ Բուլու, Ջոնգուլդադ, Իսփարթա) բարձր ընդհանուր երանգով է միայն "դարաբաղյան" և դրանց մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ, որոշ ընդհանրություններ ունենալով հանդերձ, հնչյունաքանական ու ձևաքանական բազմաթիվ առանձնահատկություններով էապես տարբերվում են թե՛ Ղարաբաղի բարբառից, թե՛ միմյանցից:

Հետևաբար, Բուրդուրի բարբառը Ղարաբաղի հետ նույնացնելը կամ նրա մի ենթաբարբառը համարելը միշտ չէր լինի:

Այժմ քննենք Բուրդուրի բարբառի ունեցած հիմնական տարբերությունները Ղարաբաղի բարբառից:

Հնչյունաքանությունից.

1. Բուրդուրի բարբառի բոլոր հնչյուններն ընդհանրապես համապատասխանում են արդի գրականին, որից տարբերվում են միայն քմայնացած սրնք պայթականներով (զ՝, կ՝, ք՝) և հազվադեպ գործածական երեք "փափուկ" ձայնավորներով (փ՛, փ՛, փ՛), մինչդեռ Ղարաբաղի բարբառում հնչյունների ընդհանուր թիվը 66-ից անցնում է ¹⁾, այսինքն՝ կրկնակի անգամ ավելի է գրականից:

2. ի տարբերություն Ղարաբաղի բարբառի, ուր ձայնավորների թիվը հասնում է 14-ի, Բուրդուրը չունի կոշտ ը, փակ ը, կարճ ա և ի՝ ինչպես նաև նրկար ա:

3. Բուրդուրի բարբառում երկբարբառային հնչյուններ չկան, մինչդեռ Ղարաբաղում հանդիպում են ըէ (մըէր, մըէծ, Բուրդուրում՝ մէր, մէնծ) և օ²⁾ օրինակ՝ վըօսմը "ոսպ", վըօխար "ոչխար" և այլն):

4. Ղարաբաղի բարբառում մի շարք քմայնացած հնչյուններ կան, որոնք (դ՝, լ՝, չ՝, լ՝) բացակայում են Բուրդուրում, իսկ Բուրդուրի բարբառում գիտակցվում է ֆ-ն, որ չունի Ղարաբաղի բարբառը: Ղարաբաղի ն հնչույթը նույնպես չկա Բուրդուրում:

Ղարաբաղի բարբառում, ըստ Ա.Վ. Գրիգորյանի, կան քմայնացած և ջ ջ) այլ պայթականներ ու պայթա-շփականներ, ինչպես՝ թ, ծ, ց, ց, 1. և 2. և Ղարաբաղի բարբառային բարոնգը, էլ 20:

3. Ա.Վ. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, էջ 251-255:

որոնք նույնպես չկան Բուրդուրում:

5. Գրաքարյան խլացած ծայնեղներինց հետո գտնվող ա-ն Ղարաբաղի բար-բառում Ամառյանի օրենքով քմայնանում է՝ առաջ, մինչդեռ Բուրդու-րում այդ խոփոխությունն առաջ է գնում մի աստիճան ևս (առաջ է), ո-րով ա-ի դիմաց լինում է է (առէ): Օրինակ՝

Գրաքար՝	բանալ	զազար	դանակ
Ղարաբաղ՝	պանալ	կժազար	տանակ
Բուրդուր՝	պենիլ	կժէզէր	տենէկ

6. Բառասկզբում և բառամիջի այլևայլ դեպքերում ևս գրաքարյան ա-ին Ղարաբաղի բարբառում հիմնականում համապատասխանում է ա-ն, իսկ Բուրդուրում՝ է-ն, օրինակ՝

Գրաքար՝	արդար	ափսոս	զամբիւղ	հարիւր
Ղարաբաղ՝	արթար	ափսօզ	զամբուլ	հարհւր
Բուրդուր՝	էրթար	էփուզ	զէմբիլ	հէյիւր

Գրաքարի ի ծայնավորը Ղարաբաղի բարբառում հիմնականում վեր է ածվում է-ի կամ ըէ-ի, մինչդեռ Բուրդուրում ի-ն մնում է ի:

Օրինակ, Գրաքար՝	հինգ	ամիս	միտք	պինդ
Ղարաբաղ՝	հէնգ՝	ամըէս	մըէտկ	պըէնդ
Բուրդուր՝	էրթար	էփուզ	զէմբիլ	հէյիւր

7. Գրաքարի ի ծայնավորը Ղարաբաղի բարբառում հիմնականում վեր է ածվում է-ի կամ ըէ-ի, մինչդեռ Բուրդուրում ի-ն մնում է ի:

Օրինակ, Գրաքար՝	հինգ	ամիս	միտք	պինդ
Ղարաբաղ՝	հէնգ՝	ամըէս	մըէտկ	պըէնդ
Բուրդուր՝	հինգ	ամիս	միտք	պինդ

8. Գրաքարի ու ծայնավորը տարբեր դիրքերում Ղարաբաղի բարբա-ռում դառնում է օ (ուօ), մինչդեռ Բուրդուրում մնում է անփոփոխ (ուօու):

ա) Բառասկզբում.

Գրաքար՝	ուլթ	ուլտ	ուլ	ուրախ	ուտիլ
Ղարաբաղ՝	օթ	օխտ(ուլտ)	օլ	օրախ	օտէլ
Բուրդուր՝	ուլթ	ուլտ	ուլ	ուրախ	ուտիլ

բ) Բառամիջում՝

Գրաքար՝	թուխպ	կուշտ	քուն	տուն	շուն	մուկն
Ղարաբաղ՝	թօխպ	կօշտ	քօն	տօն	շօն	մօկնը
Բուրդուր՝	թուլի	կուշտ	քուն	տուն	շուն	մուկ

գ) քառավերջում և զրաբարյան ութիւն վերջածանցում.

Գրաբար՝	կծու	թթու	ալւորութիւն	շնութիւն
Ղարաբաղ՝	կըծօ	թըթօ	հիլիվըրօթուկ	շընօթուկ
Բուրդուր՝	կըծու	թըթու	հիլէվօրութէն	շընութէն

10. Ղարաբաղի բարբառում քառասկզբի ուի դիմաց հիմնականում լի-
նում է վը^է (ոսվը^է), իսկ Բուրդուրում՝ վօ (ոսվօ): Օրինակ՝

Գրաբար՝	ոսկի	ոսկր	ոսպն
Ղարաբաղ՝	վը ^է սկի	վը ^է սկը ո	վը ^է սփ (վը ^է սմը)
Բուրդուր՝	վօսկի	վօսկուր	վօսպ

Գրաբարի ուի դիմաց քառամիջում Բուրդուրի բարբառը միշտ ունե-
նում է օ (ոսօ), մինչդեռ Ղարաբաղը՝ ոսա, ոսէ, ոսը, ոսու, ոսօ
ոսօ, ոսվը^է, ոսհո, ոսը^է, ոսի¹⁾:

11. Այլևայլ դիրքերում զրաբարի ե ձայնավորի դիմաց Բուրդուրում
միշտ ունենք եսյէ, եսէ կամ եսի հնչյունափոխությունը, մինչդեռ
այս դեպքում ևս Ղարաբաղի բարբառը շատ է հեռանում Բուրդուրից, ուր
ե-ն կրում է հետևյալ հնչյունափոխությունները՝ եսը^է եսը, եսը^օ,
եսի, եսու, եսա, եսէ, եսա, եսյէ, եսըէ, եսյօ, եսվը և այլն²⁾

Օրինակ Գրաբար՝	տեղի	քերել
Ղարաբաղ՝	տը ^է ղ	քիլիլ
Բուրդուր	տէղ	քէրիլ

12. Անմիջական շփման քիչ կետեր են մնում նաև է և ը ձայնավոր-
ների հնչյունափոխությունը համեմատելիս: Բուրդուրում միշտ ունենք
էսէ, իսկ Ղարաբաղում՝ էսը^է, էսա, էսի, էսա, էսու³⁾ և այլն: Օրին-
ակ՝

Գրաբար՝	մէջք	եթէ	ծէթ
	մաշկ	թա	ծը ^է թ
	մէշկ	թէ	ծէթ

13. Ղարաբաղի և Բուրդուրի բարբառները միմյանցից հեռանում են
նաև երկբարբառների հնչյունափոխության օրենքներով: Բուրդուրի բար-
բառն այս դեպքում ավելի մոտ է կանգնած Արարտայան բարբառին, քան
Ղարաբաղին: Օրինակ, Գրաբարի այ երկբարբառի դիմաց Բուրդուրում միշտ
ունենք է(այսէ), մինչդեռ Ղարաբաղում և այսէ, և ըզգմապիսի այլ հն-
չյունափոխությունների ենք հանդիպում, ինչպես՝ այսէ, այսա, այսա,
այսը^է, այսի և այլն:

1. ՏՅԿ Ա. Ս. Ղալթյան "Լեզվային Ղարաբաղի բարբառային քարտեզը",
1966, Երևան, էջ 87-88,
2 և 8-ը տես նույն տեղում:

Օրինակ՝

Գրաբար՝	կայոիք	կայծակն	այլ օր
Ղարաբաղ՝	կը՛ռիթ՝	կայծ՛ակ	ալօր
Բուրդուր՝	կէրիք	կէծակ	էլլօր

14. Մենք տարբերություններ են դրսևորվում նաև մյուս սրկաբարառ-
ների հնչյունափոխության օրանքներում, սակայն փաստ է այն հանգա-
մանքը, որ բոլոր դեպքերում էլ Ղարաբաղի բարբառի բազմապիսի հնչյուն
նափոխական երևույթների դիմաց Բուրդուրն ունենում է միշտ կայուն
և նվազագույն թվով օրանքներ, ուստի և ավելորդ ենք համարում օրի-
նակները նշել:

15. Յժն Բուրդուրի բարբառում հնչյունների քմայնացում է նկատ-
վում միայն բառակզբում և այն էլ այն դեպքում, երբ գրաբարյան
ծայննդ զ-ն վեր է ածվում կ՝-ի, իսկ զ՝ կամ ք՝ հանդիպում են բա-
ցառայնա Բուրքերենից կատարված փոխառություններում (դարձյալ բա-
ռասկզբում), ապա Ղարաբաղի բարբառի համար քմայնացման երևույթը տա-
րածվում է բոլոր վայթականների վրա (զ՝, կ՝, ք՝, դ՝) և նույնիսկ
ծայնորդների (ր՝, լ՝) վրա և այն էլ բոլոր դեպքերում: Օրինակ՝

Քմայնացում		Բառակզբին			
Գրաբար՝	զաւակ	զոււլպայ	զիտել	զոռ	զիր
Ղարաբաղ՝	զ՛աւակ	զ՛ո՛ւլքա՛	զ՛իդալ	զ՛ուռ(հորդ)	կ՛իր
Բուրդուր՝	-	կ՛ուլպաք	կ՛իտանալ	-	կ՛իր
Գրաբար՝	կապոյտ	կարմիր	կնանք	կիրակէ	կուտել
Ղարաբաղ՝	կ՛ապո՛ւտ	կ՛արմուր	կ՛անք	կ՛իրակ՛ի	կ՛ուտէլ
Բուրդուր՝	կապույտ	կարմիր	կէնք	կիրէկի	կուտիլ
Գրաբար՝	քերել	քուրայ	քէն		
Ղարաբաղ՝	ք՛իրէլ	ք՛ուրա	ք՛էն (ոխ կամ խոռվություն)		
Բուրդուր՝	քէրիլ	քուրա	քէն		

Քմայնացում		Բառամիջում և բառավերջին			
Գրաբար՝	սերկաիլ	երկայն	հանգիստ	մզնաւոր	ցաքան
Ղարաբաղ՝	սըվկ՛էվուլ	էրզ՛ան	հանգ՛իստ	միթ՛նավըէր	ցաք՛ան
Բուրդուր՝	սինկէվիլ	էրկէն	հէնքիստ	մըքնավօր	-
Գրաբար՝	աղջիկ	մրազ	օրէնք	փայտ	հայր
Ղարաբաղ՝	ախմիզ՛	մըրաք՛	օրէնք՛	փաղ՛	հար՛
Բուրդուր՝	ախլիկ	մըրաք	օրէնք	փէդ	հէր

16. Ղարաբաղում բացակայում է հաֆ հնչյունափոխությունը, և չէր էլ կարող լինել այն, քանի որ Ղարաբաղի բարբառում առհասարակ ֆ-ի գիտակցում չկա, իսկ Բուրղուրի բարբառում և ֆ-ն է գիտակցվում, և հաֆ հնչյունափոխությունը կա, որն Արարատյան բարբառին (ում մյուսը) հատուկ գծերից է: Օրինակ՝

Գրաբար՝	հոգի	հող	հոտ	հոտոտել
Ղարաբաղ՝	հօքի, հօւքի	վըէղ	վըէտ	օնէլ
Բուրղուր՝	ֆօքի	ֆուղ	ֆօղ	ֆօղֆօղալ

17. Գրաբարյան և վերջնահնչյունն ունեցող բառերը Ղարաբաղի բարբառում այն չեն կորցրել, միայն ն-ից առաջ լսվող ը-ն տեղափոխվել է ն-ից հետո, մինչդեռ Բուրղուրում վերջնահանգ ն-ն չի պահպանվել, ինչպես Արարատյան բարբառումն է կամ՝ գրական լեզվում: Օրինակ.

Գրաբար՝	ակն	մուկն	նուռն	գառն
Ղարաբաղ՝	ակնը	մօկնը	նօռնը	կ՛առնը
Բուրղուր՝	ակ	մուկ	նուռ	կ՛էր

18. Երկու բարբառներում էլ գրաբարի ձայնեղ պայթականները ու պայթա-շփականները բառակզրում (անշաճ բացառություններով) խլանում են, ինչպես՝ քալ, գալ, դառ, ծած, ջած: Մինչդեռ Բուրղուրի բարբառում ք, գ, դ ձայնեղները շատ բառերի սկզբում ոչ թե խլանում են, այլ վեր են ածվում շնչեղ խուլների (քֆի, գֆ, դֆ), որը Ղարաբաղի բարբառում հազվադեպ է նկատվում, օրինակ՝

Գրաբար՝	բարձր	բոյթն	բամբասել	բարձրանալ	բժիշկ	
Ղարաբաղ՝	պէցուր	պուլթն	պըմբասել	պըցրանալ	պիժիշկ	
Բուրղուր՝	փէցուր	փիթի	փամփըսիլ	փէցուրանալ	փիժիշկ	
Գրաբար՝	գաղթական	գանգառ	գանձանակ	գոնեա	գործ	գին
Ղարաբաղ՝	կախտական	կ՛էնգառ	կ՛ինձանակ	կօնյա	կ՛օրծ	կ՛ին
Բուրղուր՝	քախթական	քանքառ	քանցանակ	քօնէ	քօրծ	քին ¹⁾
Գրաբար՝	դառնալ	դառ	դեղ	դրախտ		
Ղարաբաղ՝	տաշնալ	դադ	տէղ	տըրախտ		
Բուրղուր՝	թէրնալ	թադ	թէղ	թըրախտ ²⁾		

1. Բախթական, քանցանակ, քօնէ, քօրծ, քին և ընդհանրապես գաք հըն-չյունափոխության ենթարկված այս կարգի բոլոր բառերն էլ արևմտյան գրական լեզվի կամ կր մյուսի բարբառների ազդեցության արդյունք են:
2. Այստեղ նշված թէնալ, թադ, թէղ, թըրախտ, և նման դֆ, հնչյունափոխության արտասանվող մյուս բառերը պետք է դիտել արևմտահայ գրականի ազդեցության արդյունք:

Ձևաքանությունից.

19. ի տարբերություն Ղարաբաղի բարձրագույն, ուր հոգնակներու մասնիկներին թիվը հասնում է մինչև 80-ի ²⁾ (չհաշված հնչյունական տարբերակները), Բուրդուրում միայն 8-10 հոգնակներու մասնիկ է գործում:

20. Ղարաբաղի բարձրագույն խոսվածքների մեծ մասում բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են նըէստա բառ-մասնիկով, որը չկա Բուրդուրում:

21. Բուրդուրում ներգոյական հոլովի անջատական կազմության ժամանակ մեջ ետադրությունը հոլովով համաձայնում է գոյականի հետ, ինչպես՝ իբրև միշում "այգու մեջ", որը բացակայում է Ղարաբաղի բարձրագույն:

Գործիական հոլովը Ղարաբաղում ունենում է ավելի Բուրդուրում՝ օվ:

22. Բուրդուրի բարձրագույն կա և անջատական բացառական, որ կազմվում է անէ բառ մասնիկով, մինչդեռ Ղարաբաղի բարձրագույն դա ունի անա ձևը: Այս մասնիկով Բուրդուրն ավելի շուտ մոտենում է Ղարաբաղի բարձրագույն, ուր նույնպես անջատական բացառական է կազմվում անէ մասնիկով: ¹⁾

23. Ձգալի տարբերություններ կան նաև երկու բարձրանների դերանուններում: Օրինակ՝ Ղարաբաղի բարձրագույն գերադասվում է փոխանուն սեռականի գործածությունը, ինչպես՝ իմինի, քուլինի և այլն՝ իմը, քոնը ձևերի փոխարեն, որը բացակայում է Բուրդուրում և ընդհակառակը Բուրդուրի բարձրագույն ունի այնպիսի դերանուններ, որոնք բացակայում են Ղարաբաղում, օրինակ՝ հարցական է՞ր կամ է՞րի և ի՞նչ դերանունները:

24. Ղարաբաղի գյուղերի մեծ մասում անորոշ դերբայն ունի երեք՝ էլ, իլ, ալ մասնիկներ. ե խոնարհման շատ բայեր հանդիպում են նաև ի խոնարհման, որով նա տարբերվում է Բուրդուրից, ուր բայերն ունեն միայն երկու խոնարհում՝ ի և ա:

25. Բուրդուրի բարձրագույն չունի Ղարաբաղի ապառնու երկու տարբերակները, այսպես ասած՝ պարտավորական ապառնին՝ -ացուկ (աալացուկ) վերջավորութամբ և ուշ ապառնին՝ -ական (կիրիական) վերջավորութամբ կազմվող դերբայներով:

26. Բուրդուրի բարձրագույն ի լծորդության բայերի սովորական ապառնու վերջավորությունն է -օլու, օրինակ՝ ասիլաօլու, հանիլաօլու, ժը Ղարաբաղում չի ունի էլու կամ էլու (կիրիէլու, կիրիլու) և այլն: Ապառնի դերբայի այս-օլու վերջավորութամբ Բուրդուրի բարձրագույն 1.Ա.Ս. Ղարիբյան, Հայ բարձրագույնություն, Երևան, 1958, էջ 141:

բառն ավելի շուտ նմանվում է Մարադային, ուր այդ վերջավորությունը նույնպես -օլու է:¹

27. Բուրդուրի բարբառը չունի նաև Ղարաբաղի ընթացակացական դերբայը, որն առաջացել է անորոշի գործիական հոլովից: Օրինակ կյիթիլավ "զրնլու":

28. Հետաքրքրական ձևով է կազմվում Բուրդուրի բարբառի սահմանական եղանակի ապառնին, ուր օժանդակ բայի ժայնավորներն ընկնում են և մնում են միայն բաղաձայները, որոնք ապառնի դերբայի հետ միաձուլվել են արտասանվում, օրինակ՝ հասնօլում "հասնելու եմ", հասնօլուս "հասնելու ես", հասնօլու (վա), "հասնելու է" հասնօլունք "հասնելու ենք", հասնօլուք "հասնելու եք", հասնօլուն "հասնելու են" ևն:

30. Բուրդուրի բարբառը Ղարաբաղի բարբառից տարբերվում է նաև սահմանականի անցյալ անկատարի և ընդհանրապես մյուս անցյալ ժամանակների կազմությամբ, որ դրսևորվում է փոխառյալ իդի մասնիկի օգնությամբ: Օրինակ, սահմանական եղանակի անցյալի անկատարը կազմվում է ներկայից՝ իդի մասնիկի օգնությամբ.

Ղարաբաղ՝ կարթում ի "կարդում էի"

Բուրդուր՝ կարթում ըմ իդի "կարդում էի"

Օժանդակ բայի ներկայի ձևերին երբեմն փոխարինում են նաև անցյալի ձևերը, սակայն իդի մասնիկն անփոփոխ մնում է, օրինակ՝ սահմանական եղանակի անցյալի անկատարը կազմվում է ներկայից՝ իդի մասնիկի օգնությամբ.

Ղարաբաղ՝ կարթում ի "կարդում էի"

Բուրդուր՝ կարթում ըմ իդի "կարդում էի"

Օժանդակ բայի ներկայի ձևերին երբեմն փոխարինում են նաև անցյալի ձևերը, սակայն իդի մասնիկն անփոփոխ է մնում, Օրինակ՝ կարթում ենք իդի "կարդում էինք" և այլն:

30. Բուրդուրի բարբառում, ինչպես նշեցինք, իդի մասնիկը մասնակցում է նաև մյուս եղանակների անցյալի ձևերի կազմությանը, ինչպես պետք ա կարթամ իդի "պետք է կարդայի" (հարկադրականի անցյալ ապ.) կըկարթամ իդի "կկարդայի") պայմանականի անցյալ ապառնի), կարթամ իդի "կարդայի" (ըղծականի անցյալ ապառնի): Նաև սահմանական եղանակի անցյալի մյուս ձևերն է դրսևորում, ինչպես՝ կարթացած ըմ իդի "կարդացած էի", կարթացել իմ իդի "կարդացել էի" և այլն, որոնք Ղարաբաղում չկան:

1. Ա. Ս. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1958, էջ 195:

81. Ղարաբաղում չկա թուրքերենից փոխառյալ -իքէն մասնիկը, որ
Բուերդուրում կցվելով անորոշ կամ անկատար դերբայներին՝ մակբայա-
կան իմաստ է հաղորդում նրանց: Այս մասնիկը համապատասխանում է ար-
դի գրականի -իս դերբայական մասնիկին, օրինակ՝

Ըշտաղուր ուտելիքէն կէրիքնիս ա ցավում "դեղձ ուտելիս առամ-
նեքս է ցավում:

Թանդըրը վառումիքէն՝ հէզիս ծըթաց վէրէս "թոնիքը վառելիս
մայրս վրաս գողաց":

82. Ղարաբաղի և Բուերդուրի բարբառների տարբերությունները ի հայտ
են գալիս ոչ միայն հնչյունաբանության ու ձևաբանության մեջ, այլև
բառապաշարում, առանձին նախասիրած ոմբորում, եղանակավորող բառերում,
բառակազմական միջոցներում և նույնիսկ փոխառություններում:

Օրինակ, Բուերդուրի բառազանձում այնպիսի բառեր կան, որոնք Ղա-
րաբաղը չի մանաչում. ծուխ "ծխախոտ", թէնկիլ "քնել", կէքր, "ոչխար",
պաշար "գաթա", սիպտէկ տաք "շողգամ", կարմիր տաք "բազուկ", խարջ
ընիլ "ձեռագործել", կուլկպաք ընիլ "հյուսել", փունդ "փայտյա մեծ
աման", ժիրվիլ "առողջանալ կամ գիրանալ", ծըրվիլ "խնթանալ",
տէղմունք "վաստակ", միլնկիտէկ "շատ" և այլն:

Որպեսզի ցույց տանք երկու բարբառների բառացանկի տարբերություն-
ները, ստիպված կլինենք հարյուրավոր բառեր թվարկել: Ի տ ա վ ա կ ա ն
է նշել այն փաստը, որ այդ բարբառների բառացանկերի հազիվ 60 տո-
կոսն է համընկնում, մինչդեռ Ղարաբաղի բարբառով խոսող 200-զյուղե-
րում այդ կարգի տարբերությունները 10 տոկոսից չեն անցնում:

Գրեթե նույն պատկերն ենք նկատում, երբ փոխառությունների ցանկն
ենք համեմատում: Օրինակ, „տակաո՝ նշանակությամբ Բուերդուրի բարբա-
ռում գործածական է վարըլ; Ղարաբաղում՝ պոշկա, „զնացք՝ կամ „շոգեքարջ՝
նշանակությամբ. Բուերդուրում՝ վափօր, Ղարաբաղում՝ պոյէզ, „աթոո՝ նը-
շանակությամբ. Բուերդուրում՝ իսկէմբի կամ սանդալյա, Ղարաբաղում՝
տաբրէթկա, „բաթակ՝ նշանակությամբ. Բուերդուրում՝ բիլլօր, Ղարաբաղում՝
ըստաբան և այլն և այլն: Դեռ ավելին, միևնույն օտար բառերը տարբեր
ձևով են արտասանվում Ղարաբաղում և Բուերդուրում, քանի որ դրանք փոխ-
են առնված տարբեր լեզուների միջնորդությամբ, ինչպես՝

Ղարաբաղ՝	կըստում	պալտօ	ցեմէնտ
Բուերդուր՝	քօսթիմ	փալթօ	չիմէնթօ

Շարահյուսությունից.

83. Ղարաբաղի խոսվածքներում գործածական են դերբայ-ստորոգյալ-
ներ, այսինքն՝ առանց օժանդակ բայի, միայն որևէ դերբայով արտահայտ

վող ստորոգյալներ, որպիսիք Բուրդուրի բարձրում չկան: Նման ստորոգյալների դերում հանդես են գալիս անկատար, ավառնի, վաղակատար և հարակատար դերբայները: Օրինակ՝

Յէս ք՛էցալ բազար, թօթ առալ կէրալ: (վաղակատար դերբայ):

Աթի, աճ՛լ կ՛իծ ըս ըլալ, յէս գ՛իղալու: (ապառնի դերբայ):

Խի ըք նըստէլ, մըհէնգ՛լ ք՛ընացած, թօթնը կէրած յէկած: (Ֆարակտ-):

Խէ ըք նըստէլ, մըհէնգ՛լ ք՛ընացէլ, հադօղ կէրէլ յէկէլ: (Վաղակտ-):

84. Ղարաբաղի խոսվածքներում անորոշ դերբայը կարող է դառնալ նըպատակի պարագա, իսկ Բուրդուրում նման երևույթ չկա, օրինակ՝

ք՛ընացինք տանձ օտէլ: (Անորոշ դերբայ):¹⁾

Իսկ Բուրդուրի բարձրում գրականի պես է՝ նէցինք տանձ ուտօլու: (Տրական հոլովով):

85. Ղարաբաղի բարբառի շատ խոսվածքներում մոտենալ բայը ընդունում է բացառական խնդիր, մինչդեռ Բուրդուրի բարբառը այս հարցում ևս գրականին է նմանվում: Օրինակ՝

Ղըք. Յէս մուտացա քըզանա²⁾

Բրդ. Յէս մօտացա քէզ:

86. Ղարաբաղի խոսվածքներում գործածվում է տրական հոլովով ենթակա, օրինակ՝ Ինձ օնէմ: Քըէզ օնէս:

Մինչդեռ Բուրդուրի բարբառում գրականի պես է լինում, օրինակ՝

Յէս ունեմ: Տո՛ւ ունէս և այլն:

87. Բուրդուրի բարբառին խորթ երևույթ է նաև բակառությունը, որն այնքան մեծ տարածում ունի Ղարաբաղում: Օրինակ՝

Շատ կանաչ կան: Սաղ խալիին կէսը տէսէլ ըն, ասում ըն:

88. Ղարաբաղում ցուցական դերանունների եզակին (էս, էտ, էն), ընդունելով զ նախդիրը, դառնում է ենթակա, ինչպես՝

Ըզէն տայիս ա ըլալ, ամմա յիս յէր չըմ կալալ?³⁾

Բուրդուրի բարբառն այս կետում ևս հետու է կանգնած Ղարաբաղից:

89. Ղարաբաղի շատ վայրերում տարածված է նաև ինքն դերանվան գործածությունը դիմորոշող հոդի և զ նախդիրի հետ (հայցական հոլով), ինչպես՝ Ջինք՛ըս հըվաթէցէ, զինք՛ըտ վըհաթէ և այլն, որը նույնպես չի նկատվում Բուրդուրում:

40. Բուրդուրի բարբառը չունի նաև Ղարաբաղի իբրև թարմատար-բացահայտիչ գործածվող ցուցականների ձևերը, որոնք դրվում են ենթակայի

1. Ղարաբաղի բարբառից բերված խոլոր օրինակները վերցված են Կ. Դավթյանի "Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը" գրքից էջ 218-222:

2. Տես նույն տեղում:

3. Տես նույն տեղում:

4. Տես նույն տեղում:

կամ գոյական լրացման վրա, օրինակ՝

Աղայան՝ տա Շուշի ըլալ ա: Ռափփին՝ էն ձերապէրթըմը ըլալ ա:
Արամը՝ տա լավ տղա յա:

Երկու բարբառների ունեցած հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական այս հիմնական տարբերություններին կարելի է ավելացնել բազմաթիվ առանձին կամ մասնավոր տարբերություններ, ինչպես Ղարաբաղի բարբառի առանձին բառերում տեղի ունեցող ս>հ հնչյունափոխությունը (տեսանել > տէհած, ասել > ասէլ), որ չկա Բուլղոլուում, ծայնավորների ներդաշնակության օրենքը, որ թեև երբեմն Բուլղոլուում էլ է դրսևորվում, սակայն այլևս սիստեմ չի կազմում, ինչպես Ղարաբաղում և այլն, և այլն:

Այսպիսով, անվիճելի է այն փաստը, որ իր սիստեմ կազմող բազմաթիվ տարբերություններով, Բուլղոլուի բարբառը շատ հեռու է կանգնած Ղարաբաղից: Հետևաբար, մեծ սխալ կլիներ նրան Ղարաբաղի բարբառի հետ նույնացնելը կամ նրա մի ենթաբարբառ համարելը՝ այն դեպքում, երբ հայ բարբառագիտության մեջ նման բարբառներն իսկ անկախ են դիտվել, եթե ունեցել են ընդամենը երկու-երեք հնչաբանական, ձևաբանական կամ ավելի նվազ թվով տարբերիչ գծեր: Մինչդեռ, Ղարաբաղի և Բուլղոլուի բարբառների համեմատությունից ավելի շատ տարբերություններ են ի հայտ գալիս, քան նմանություններ:

Օրինակ, ինչպիսի առանձնահատկություններ ու տարբերիչ գծեր է նկատի ունեցել մեծ բարբառագետ ակադ. Հ.Ամատյանը ում մյուսդի նման բարբառները միմյանցից անկախ համարելիս.

—Աստրախանի բարբառը կը բռնէ Շամախիի և Երևանի բարբառներուն մեջտեղը, բայց այս երկունքէն ալ տարբեր է: Բաղածայնները կը հպատակին Շամախիի կամ Ղարաբաղի ծայնական օրենքներուն, իսկ ծայնաւորները սովորաբար Երևանի համածայն են (ընդգծումներն իմն են՝ Ն.Մ.):

Այնուհետև. "Շամախիի բարբառը կը կազմէ միջին օղակ մը Ղարաբաղի և ձուղայի բարբառներուն: Իր ծայնական դրությունը և ծայնաբանական փոփոխությունները, ինչպես և քերականական շատ ձևեր բոլորովին նույնն են Ղարաբաղի բարբառին հետ: Այս պատճառով կարելի պիտի ըլլար գուցէ Շամախիի բարբառն ինքնուրույն բարբառ մը չհամարել և Ղարաբաղի բարբառին մեկ ենթաբարբառը կարծել, սակայն դերանուններու այլազան ձևերը, ինչպես և ներկային կազմությունը, որ բոլորովին տարբեր են անկէ, կ'ստիպեն մեզի ընդունիլ զայն իբրև անկախ բարբառ (ընդգծումներն իմն են՝ Ն.Մ.):²⁾
1. Հ.Ամատյան, Հայ բարբառագիտութիւն, ԷԱԺ, Մոսկուա-նոր-նախիջևան, 1911, էջ 76:
2. Տես նոյն խոսքով:

ինչպես տեսնում ենք, առաջին դեպքում նման բարքառներն անկախ են համարվել, երբ տարբերվել են միայն ծայնավորների հնչյունափոխությամբ, իսկ երկրորդ դեպքում՝ միայն դերասունների ու բայի ներկայի կազմության մեջ ունեցած տարբերությամբ: Մինչդեռ Ղարաբաղի և Բուրդուրի բարքառների միջև եղած տարբերությունները 40-ից անցնում են:

Հայտնի բարքառները միմյանցից սահմանազատելու հարցին հատուկ մի գլուխ է նվիրված Նաև ակադ. Ա.Ս. Ղարիբյանի "Հայ բարքառագիտություն" գրքում (էջ՝ 85-106), ուր սահմանված են 12 հիմնական կետեր, որոնցից նույնիսկ մեկի առկայության դեպքում բարքառը համարվում է ինքնուրույն. "Այս 12 հատկանիշներից մի խումբ հատկանիշներով (հնչյունական և ձևաբանական) միմյանցից տարբերվող խոսվածքներն ազատ կերպով կարելի է դիտել իբրև առանձին բարքառներ:¹⁾

Այնինչ, Բուրդուրի բարքառի ունեցած տարբերություններն այնքան շատ են Ղարաբաղից, որ համեմատության եզրեր, իսկ չեն մնում երբեմն:

Այսպես օրինակ, ծայնավորների և երկբարքառների հնչյունափոխությամբ այն ավելի մոտ է կանգնած Արարատյան և Աստրախանի բարքառներին, քան Ղարաբաղին:

Այժմ անդրադառնալով այն հարցին, թե Բուրդուրի բարքառի ունեցած առանձնահատկություններն ամբողջությամբ հնի²ց են զալիս, թե՞ արդյունք են նոր միջավայրի, ուր գտնվել է Բուրդուրի հայ գաղթածքը շուրջ 800 տարի:

Առանց կասկածելու կարելի է պնդել, որ Բուրդուրի բարքառի առանձնահատուկ գծերի մի մասը ձեռք է բերվել նոր միջավայրում՝ կը ճյուղի բարքառների հարևանության ժամանակ, իսկ մեծ մասը սղել է հնից:

Օրինակ, անվիճելի է այն փաստը, որ անկառար դերբայի -իս մասնիկի փոխարինումը -իքէն մասնիկով տեղի է ունեցել նոր միջավայրում կամ անմիջապես պաշտոնական-պետական լեզվի՝ թուրքերենի նմանողությամբ, կամ կը ճյուղի բարքառների ազդեցությամբ, որոնցից շատերն ունեն -իքէն-ը (այդ թվում Նաև Պոլսի բարքառը²⁾ մինչդեռ այդ ձևը դարաբաղյան միջավայրի ոչ մի բարքառում չի նկատվում:

Նոր միջավայրում է ստեղծվել (փոխ առնվել) Նաև անցյալ անկառար, և բոլոր մյուս անցյալ ժամանակները դրսևորող իդի մասնիկը,³⁾ որ դարձյալ դարաբաղյան միջավայրի բարքառներում չկա:

1. Ա. Ս. Ղարիբյան, Հայ բարքառագիտություն, Երևան, 1953, էջ 90:

2. Հ. Աճառյան, Քնն. Պոլսահայ բարքառի Երևանի համալսարանի, "Գիտ. Աշխ.", հատոր 19, Երևան, 1941, էջ 172-173:

3. Հ. Գասպարյան, Հաճընի բարքառը, Երևան, 1966, էջ 98-99:

սիստ հետաքրքրական է այն փաստը, որ Բուրդուրի բարձրագույն ևս 70, 80, 90 քանակականների անվանումները փոխարինված են թուրքերեն յէթմիշ, սէքսէն, ասիսան բառերով, ինչպես որ կատարվել է դա Պուսի և Արևմտյան Անատոլիայում զտնվող մեր մյուս բարձրաններում²։ Իսկ Նարաբադի և Նրան հարևան մյուս բարձրաններում պահպանվում են վերոհիշյալ քանակականների հայերեն անվանումները։

Բուրդուրի բարձրագույն հարյուրավոր եվրոպական փոխառություններ կան, ինչպես՝ մասա "սեղան", վարըլ "տակառ", վաֆոր "շոգենավ" կամ "շոգեքարշ", դամփանա "զանգ", զօրա "վառարան", թօռնավիդա "պտուտակահան", մադամ "տիկին", դառնավալ "կառնավալ" և այլն, որոնցից մեծ մասը թուրքերենի միջնորդությունով է անցել Բուրդուրի բառապաշարի մեջ կամ հարևան բարձրանների միջոցով, մինչդեռ այդպիսիք Նարաբադի ու Նրան հարևան մյուս բարձրաններում չկան և չէին էլ կարող լինել։

Բուրդուրի բարձրագույն զրաբարյան ձայնեղները բառակազմի պիտի հանդես գային էբրև խուլներ, մինչդեռ երբեմն արտասանվում են իբրև շնչեղ խուլներ /կամ երկու ձևով էլ/, որ կը մյուսդի բարձրանների կամ արևմտահայ գրականի ազդեցությամբ է բացատրվում, որի պատճառով էլ մի շարք բառեր հանդես են գալիս երկակի արտասանությամբ, ինչպես պիժիշկ/փիժիշկ, պիժէնիլ/փաժնիլ, բախաւփօր/փախաւփօր, պըրկէն-թանը/փարկէնթանը, կիժուռնը/բարուռնը, կիէնգառ/բանքաղ, կիինի/բինի, տիժօխը/թըժօխը, տըրախտ/թըրախտ և այլն։

Այսպիսով, Բուրդուրի բարձրագույն նոր միջավայրում կրել է զգալի փոփոխություններ կը մյուսդի բարձրանների, երբեմն էլ պետական-պաշտոնական լեզվի՝ թուրքերենի ազդեցությամբ, որոնք արտացոլված են նրա կամ հնչյունաբանության, կամ քերականության, կամ բառապաշարի ու բառակազմական միջոցների մեջ։

Իսկ ուրիշ ինչ ազդեցություններ կարող են կրել Բուրդուրի բարձրագույն Նարաբադի աշխարհագրական միջավայրից դուրս։

Քանի որ բուրդուրացիները դուրս են եկել ոչ թե ուղիղ Նարաբադից այլ շահ Աբասի քոնազադից անմիջապես հետո՝ Պարսկաստանից, ուստի անհիմն չէր լինի կարծել, որ նրանց մեջ նաև այլ բարձրանների ներկայացուցիչներ կարող են մերվել։

Արևմտյան Անատոլիայի նման զաղթօթիկների հիմնադրման վերաբերյալ եղած վկայությունները նույնպես հաստատում են այս միտքը։ Ավելորդ

1. Հ. Ամսոյան, Քնն. Պուստայ բարձրանի քերականի համալսարանի, "Գիտ. Աշխ.", հատոր 19, Երևան, 1941, էջ 120։

չէր լինի Արևմտյան Անատոլիայի նման "դարաքաղյան" գաղթօջախների վերաբերյալ մի քանի վիճակագրական տվյալներ բերել Հ.Գասալյանի "Հայերը նիկոմեդիոյ գաւառին մէջ" և "Մեր Ձմիւռնիւն" գրքերից:

Ձմիւռնիւս. "Ջուղա, Թիֆլիզ, Երեւոյթ, Կարփի, Ղափան, Գանձակ, Նախիջևան, Գողթն, Աստապատ, Շուշիկէրտ և այլն, որոնք կերակն տապանագիրներուն մէջ՝ ցույց կուտան, թէ իզմիրի նախաջայրերը նուրի, Սեւանայ, Երասխայ ամերէն բաժնուած են "1):

Բուլու, Տէվրէկ, Տուզմէ. "Այս շրջանի հայութիւնը գաղթած է Մեծ Հայաստանէն, Նախիջևանէն, և Երևանի կողմերէն. հաւանօրէն Շահ Աբասի արշաւանքներէն յետոյ՝ 1605թ.: Անոնց արարատեան բարբառը (իմա՝ "արեւլյան") ոչ մէկ տարակոյս կը թողու: Գաղութի մագաղաթնայ գրչագիր աւետարանը աւելորդ փաստ մըն է. "Գրուեցաւ սը աւետարանս ի քաղաքին Նախիջևանի, Ամի տն. 1851, եւն"2):

Նագիլի. "Գաղթած են Երևանէն, Ազուլիսէն եւ Ղարաբաղէն" 3):

Դենիզլի. "Տենիզլիի հայերը գաղթած են Պարսկաստանէն 17-րդ դարուն: Երեւոյ կը խօսին միայն հայերէն, իսկ նրիտասարդները՝ թէ՛ հայերէն, թէ՛ տաճկերէն"4):

Քրըր-Աղաջ. "Գաղթած են Դաւրիժէն, Ղարաբաղէն եւ Երևանէն":5)

Օդեմիշ. "Օդեմիշի հայերը 17-րդ դարուն գաղթած են Ղարաբաղէն եւ Երեւանէն":6)

Գասապա. "Գասապայի հայերը գաղթած են Պարսկաստանէն գրեթէ երկու դար առաջ":7)

Ինչպէս նկատուած ենք, վերոհիշյալ հայ գաղթօջախների առաջացումը Արևմտյան Անատոլիայում արդյունք է գլխավորապես թուրք-պարսկական ամայացուցիչ պատերազմների, որոնք ուղեկցվել են մասսայական բռնագաղթերով (հիշենք հատկապես Շահ Աբասի մեծ բռնագաղթը 17-րդ դարի սկզբին): Մեզ թվում է, որ նման պայմաններում առաջացած Բուլուրդուրի գաղթօջախում ևս միատարր կամ անխառն բնակչութիւն որոնելը սխալ կը լիներ, սակայն բոլոր դեպքերում մեծամասնութիւնը միանույն գյուղի բնակիչներ են եղել: Հետևաբար, սխալ կ'լիներ նաև Բուլուրդուրում "անաղարտ" դարաքաղյան բարբառ որոնել, կամ այդ բարբառի այսօրվա վիճակով ենթադրել, թէ նրանց նախաջայրերը Ղարաբաղի որ մասից են եկել: Այնուամենայնիվ,

1. Հ.Գասապյան, Հայերը նիկոմեդիոյ, գաւառին մէջ, Կ.Պոլիս, 1918,

էջ 11-12:

2. Նույն տեղ, էջ 99:

3. "Մեր Ձմիւռնիւն", ֆրեզնո, 1952, էջ 181:

4. Նույն տեղ, էջ 181:

5. Նույն տեղ, էջ 161:

6. Նույն տեղ, էջ 181:

7. Նույն տեղ, էջ 181:



ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՄ ԶԹՈՒՂԻՆԵ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱՐՐԱՍՊԵՆԻ ՏԵՂԱՊԱՆԿՈՒՄԸ

ՓՈՐՐ ԱՍԻԱ ԹԵՐԱՆՂՈՒՄ

մենայնիվ ձևաբանական ու հնչյունաբանական որոշ հատկանիշներով այն ավելի մոտ է Բվում Ղարաբաղից հարավ կամ հարավ-արևմուտք ընկած շրջանների բարբառներին:

Վերոհիշյալ "ղարաբաղյան" գաղթօջախները և Բուրդուրը (բացառությամբ Ջմիռնիայի, որն ավելի հին պատմությույն ունի) թեև հիմնադրվել են միաժամանակ, սակայն սերած լինելով Ղարաբաղի տարբեր շրջաններից, շփվելով տարբեր բարբառների ներկայացուցիչների հետ կամ խառնվելով նրանց, կղզիացած լինելով Թուրքաթուս միջավայրում կամ հարևանության մեջ լինելով կը մյուսի բարբառների հետ՝ զարմանալիորեն տարբեր օրինաչափություններով են ներկայանում այսօր, որոնք կարևոր եզրահանգումների հիմք կարող են դառնալ հայ. բարբառագիտության որոշ հարցեր պարզաբանելու տեսակետից:

Այդ իսկ պատճառով էլ Բուրդուրի բարբառի մասնավոր քննությանն ու նկարագրությանը զուգընթաց մեր ոչ երկրորդական նպատակը դարձավ ընդհանրապես նոր միջավայր ընկած հայերեն բարբառների հետագա էվոլյուցիայի հարցերին անդրադառնալը և բարբառալուծման կամ բարբառաստեղծման նպատակով պայմանները բացահայտելը: Մի հետաքրքրական հարց, որի կարևորության մասին խոսել է նաև մեր երաժիշտ-ուսուցչապետը՝ ակադ. Հ. Ամառյանը. "Սա մի շատ հետաքրքրական հարց է, թե պատմական, թե՛ լեզվաբանական ստակետով: Բայց այս մասին զրնթե ոչ մի աշխատանք չի կատարված" ¹):

Եվ իրոք, շատ հետաքրքրական է պարզել, թե նոր միջավայր տեղափոխված որևէ բարբառի ո՞ր հատկություններն են ամենակենսունակը, որոնք վաղանցուկ: Որտեղի՞ց է սկսվում, արդյոք, բարբառների փոփոխությունը՝ ձևաբանությունի՞ց, թե՞ հնչյունաբանությունից: Կամ՝ առհասարակ, որևէ բարբառի հնչյունաբանական, թե՞ ձևաբանական հատկություններն են ավելի կայունը, և կամ նոր օրինաչափությունները միաժամանակ են հանդես գալիս և՛ հնչյունաբանության, և՛ բերականության մեջ՝ առանց նոխորդելու մեկը մյուսին:

Խոսքն այստեղ ոչ թե "ներքին" փոփոխության՝ ընաշրջության մասին է (որը թեև դանդաղ, բայց առկա է ամենուրեք. թե՛ գրական նորմավորված լեզվում, թե՛ բարբառներում), այլ այն արտաքին ազդեցությունների մասին, որոնք գումարվելով այդ "ներքին" էվոլյուցիային, ավելի սրընթաց ու շեշտակիորեն են փոխակերպում ավյալ բարբառը՝ սերած միջավայրի հետ համեմատած: Ահա թե ինչու է կարևոր նոր բարբառի ձևավորման հարցում շրջապատող պայմանների և նրա անկախ գոյության ժամանակի մշտականությունը:

1. Հ. Ամառյան, Հայոց լեզվի պատմություն, հատոր 2, էջ 487:

Եթե մայր բարձրագույն էվոլյուցիայի համար որոշիչ գործոնը ժամանակն է մնում, և շրջապատի ազդեցությունները քիչ են դեր խաղում կամ երկրորդական դերումն են, ապա նոր շրջապատ ընկած բարձրագույն մարդ որոշիչ և հեղաշրջող դերը հիմնականում շրջապատի ազդեցությանն է պատկանում:

Պարզ է, որ ինչպիսին էլ լինեն նոր միջավայրի պայմանները, նորեկ բարձրան, անշուշտ, կարող է թեկուզ "իններցիայով" երկու սերնդի հետ (մոտ 50 տարի) հարստանալ՝ կրելով ոչ էական, մասնակի փոփոխություններ: Բայց այնուհետև դժվար թե այն կարողանա պահպանվել, եթե այդ բարձրանի տիրապետողները քանակապես նվազ են հարևան բարձրափոսներին:

Պրոլիթունն այլ է, եթե նոր միջավայրում նույն բարձրանի ներկայացուցիչները բնակվում են թաղերով և ամենօրյա շփման մեջ են միմյանց հետ կամ կղզիացած են ու հեռու մեծ բարձրանների ազդեցության ուղիղից, կամ իրենք են մեծամասնություն կազմում տվյալ վայրում, կամ զրական լեզվի ուսուցումը դեռևս մասսայական չէ:

Այդ բանը հատկապես ցայտուն է երևում, երբ նայում ենք վերոհիշյալ "դարաբաղյան" գաղթողների քարտեզին և վիճակագրական տվյալներին. պարզ է դառնում այն փաստը, որ առավել նվազ են փոփոխվել այն հայ գաղթողները, որոնք կղզիացած են եղել թուրքախոս միջավայրում և տնտեսական ու կուլտուրական հարաբերություններով սերտ շփում չեն ունեցել Պոլսի կամ Ջմյուռնիայի հետ, հետևաբար տերիտորիալ իշխող բարձրանների հետ ամենօրյա շփման առիթներ քիչ են ունեցել (օր. Բուրդուր):

Հնդհակառակն, արագորեն են քայքայվել և իրենց բարձրանները կորցրել այն գաղթողները, որոնք գտնվել են անմիջապես կը մյուսդի առավել հզոր բարձրանների՝ Պոլսին կամ Ջմյուռնիային մոտիկ (օրինակ՝ Օդեսի-2ը, որ գտնվել է Ջմիուռնիայից ընդամենը 180 կիլոմետր հեռավորության վրա):

Բարձրագույն համեմատական անադարտությունը նպաստող հանգամանքներից պիտի համարել նաև հետագայում նրան այլ գաղթականների խմբեր չխառնվելը: Օրինակ, Արևմտյան Անատոլիայի մի շարք այլ գաղութներ, ինչպես՝ Սիվրի-Ջաբր, Սթանոզ, Մուրադչայ, ունենալով բնակչության կայուն կորիզ, գրեթե չեն ենթարկվել այլ բարձրանների ազդեցությանը: Շուրջ մեկ և կես դար է, ինչ խոյցիները բնակչություն են հաստատել Արարատյան դաշտավայրում և գտնվում են ուսմ. մյուսդի ամենահզոր բարձրանի անմիջական ազդեցության ներքո: Սակայն այն գյուղերում, ուր քանակապես

գերակշռողները խոյեցուններն են, այնտեղ դեռ "անտղծ" է մնացել խոյի բարբառը կամ քիչ է "սուժել", մինչդեռ այն զյուղերում, ուր խոյեցիները քանակապես նվազ են եղել կամ ոչ թաղերով բնակված, արդեն ում մյուռն է հաղթանակել:

Այս թե ինչու դարաբաղյան երանգը նվազ փոփոխությամբ է պահպանվել հատկապես մեծահամայնք ու միատարր զաղութներում (Բուրդուր, Իսփարթա, Բուլի, Էլմալու), որոնք ունեցել են 200-300-ական ընտանիք բնակչություն:

Իսկ փոքրահամայնք զաղթօջախներում (ինչպես՝ Նազիլի, Անթալյա, Դենիզլի, Դուզլե, Դավրնկ, մասամբ և Օդեմիշ) մինչև 1915թ. եղեռնը բարբառն արդեն կազմալուծված վիճակումն է եղել:

Բացի այդ պատճառներից, նշված զաղութների լեզվի վրա (և ընդհանրապես պատմական Հայաստանից Արևմուտք տեղափոխված բոլոր հայ զաղթօջախների լեզվի վրա) իր դրոշմն է դրել բռնի ասիմիլյացիայի ամենակուլ գործոնը՝ թուրքերեն լեզուն: Եվ այդ ազդեցությունից չի կարողացել խուսափել ոչ Բուրդուրի և ոչ էլ արևմտահայ բարբառներից որևէ մեկը:

Երբեմն այդ ազդեցությունն սկսվելով բառապաշարից ընդարձակել է իր ուղորտները՝ ընդհուպ մինչև ձևաբանական և հնչյունաբանական նմանակությունները: Բնականաբար այդ փոփոխությունները կատարվում են հասարակության կամքից անկախ՝ նոր միջավայրին հադորդակցվելու անհրաժեշտությամբ:

"Այս փոփոխությունները կատարվում են լեզվի մեջ հասարակության կամքից անկախ, համախ՝ սկզբնապես առանց նույնիսկ հասարակության կողմից գիտակցվելու":¹⁾

Երևույթների փոխադարձ կապն անժխտելի է: Փոխադարձ բառերն ու ոմերը, երբեմն էլ պարապորել են իրենց արտասանությունը փոխառու լեզվին՝ խաթիլելով նրա ունեցած նախկին հնչյունական ու քերականական օրինաչափությունները և փոխառնել ստեղծելով նորը:

Օրինակ, Բուրդուրի բարբառում դասական թվականներ են կազմվում ինչի (փոխառյալ մասնիկով, որն սկզբում առանձին չէր կարող գիտակցվել և փոխառվել իբրև մասնիկ, այլ այդ մասնիկը բարբառ է թափանցել նախ թուրքերեն ճիւղը "առաջին" կամ "առաջնակարգ", լԿԻՆԸ "երկրորդ" ձևերի հետ և այնուհետև համաբանությամբ սկսել է նաև հայերեն արմատներից կազմվող քանակականների վրա դրվել, ինչպես՝ բիրինչի կամ մինընչի, իթինչի կամ յօրկունչի, բէշինչի կամ հինգընչի,

1. Է. Աղայան, Լ եզվաբանության ներածություն, Երևան, 1968, էջ 809:

յէտաինշի կամ օխարնշի, սէքիզինշի կամ իննինշի և այլն:

Այդ ձևերը, երբեմն առանց արժեքաւորման, հաճախապէս օգտագործւում են համառօտ միևնույն նախադասութեան մեջ, օրինակ՝

Օխարնշի դաթում հաքըրն ա կէնում, իքինշումը՝ մաքըրը "Յոթնորդ հարկում հորաքոյրն է ապրում, երկրորդում՝ մորաքույրը":

Կամ՝ Թուրքերենում արհեստներ և զբաղմունք ցույց տվող բառեր են կազմվում շի (- ցն) ածանցի միջոցով, ինչպես՝ ԿԵՆԱՅԵ "խորոված պատրաստող", ՖԻՆԱՅԵ "ծնփող", ՎԵՄԵՆԱՅԵ "երկաթագործ" կամ "դարբին", ԳՎՄԱՖԻՆԱՅԵ "լվացարար" և այլն:

Այս բառերի համաբանութեամբ, բարբառում - շի ածանցի օգնութեամբ սկսել են արհեստներ և զբաղմունք ցույց տվող բառեր կազմել նաև հայերեն տրամաւորից, ինչպես՝ փողնիքը "բողնիսպան", զեմբիլի "զամբյուղագործ", լիվէսը "լվացարար", հանաքը "կտակասեր" և այլն: Նույնիսկ - շի ածանցը լրացուծիչ դրվել է այնպիսի բառերի վրա, որոնք առանց այդ ածանցի էլ արհեստ կամ զբաղմունք են ցույց տվել, ինչպես՝ քրուտադր՝ քրուտը, ներկադր՝ ներկադրի և այլն: Իհարկէ հնչուէնական և ձևաբանական այս առանձին տարրերը դեռևս նոր որակ չեն կարող կազմել, սակայն կրելով աւական ընդլայն, աստիճանաբար հասնելով մեծ քանակի, բնական է, որ բարբառին կարող են նոր որակ հաղորդել և նույնիսկ ի վերջո լուծել նրան փոխառու լեզվի մեջ, ինչպես կատարվեց այդ մի շարք հայ գաղթօջախներում դեռևս 1-2 դար առաջ (Ուշաք, Եյոթահիա (կամ Կուտինա), Աֆիոն-Գարահիսար, Բուրսա, Կեսաբիա, Յոզգաս և այլն):

Թուրքերենից գառ, ինչպես նշեցինք, Բուրդուրի բարբառը կրել է կը մյուղի բարբառների, իսկ հետագայում էլ, որոշ շահով, նաև զրական լեզվի ազդեցութեամբ:

Չէ՞ որ հողորդակցութեան հեշտացման համար այլևայլ բարբառների ներկայացուցիչները ձգտում են իրենց արտասանութիւնը "մոտեցնել" ալլա միջավայրի իշխող բարբառին կամ զրական լեզվին, որի պատճառով լեզվում սկսում են մրցել հնչուէնական կամ քերականական երկու օրենքներ, որոնցից նորը համառաւ տարածվելով գործունէ արժեք է ստանում և մոռացութեան է դատապարտում հինը:

Օրինակ, հին սերունդը "քնել" բառի փոխարեն օգտագործում է թէն-կիլ կամ թէք ընկիլ ձևը, որն առաջացել է զրաբայան թէկն անկանել դարձվածքից, սակայն որքան էլ պահպանողական լինեն մեծահասակները, այնուամենայնիվ նրանք էլ են ստիպված լինում երբեմն նոր ոճերին կամ փոխառութիւններին դիմել: Օրինակ մի նմուշ սկեսրոջ և հարսի խոսակցութեան:

—Այ, Մարյան, ի՞նչ էս ըբին թէնկըցընում բէշիկումը "Այ Մարիամ, ինչու" շես քնացնում երեխային օրորոցում":

—Ըբէն կաննէլ լէլիս ա, ուզում չի բէշիկումը քընի "Երեխան կանգնել լալիս է, չի ուզում օրորոցում քնել":

—Նի յէլ կուտուրումը քընացրու, դա՛ս օքուդ ա "Բարձրացիր կտուրում քնացրու, ավելի լավ է "—պատասխանում է սկեսուրը արդեն կես—զրափան արտասանությամբ՝ ավանդական թէնկըցրու—ի փոխարեն գործածելով քընացրու ձևը:

Մեկ այլ օրինակ ևս: Բուրդուրի բարբառում "ծնող" բառը չկա. այդ իմաստով գործածում են "հէզին ու էքին" արտահայտությունը, որ կազմված է հէզի (յայր) և էքի (յայր) բառերից: Սակայն, իր շրջապատից դուրս բուրդուրցիքն զգալով այդ բառերի անհասկանալիությունը մյուսների համար, օգտագործում է նոր շրջապատի վերցրած "ծնօթք" (ծնող) բառը: Առաջիններն օգտագործում է տանը, վերջինը՝ դրսում: Բայց աստիճանաբար ավելի գործածական է դառնում նոր բառը, որը համընդհանուր կամ տեղիորդիալ մասնավոր ունի և հասկանալի է բոլորի համար, ուստի և մոռացություն է մատնվում հինը՝ նեղ բարբառայինը:

Իհարկե, բոլոր բառերն հավասարապես ենթակա չեն փոփոխության՝ կան բառեր, որոնք շուտ են տեղի տալիս, կան բառեր էլ, որոնք ոչ իրենց հին արտասանությունն են կորցնում, ոչ էլ իրենք են մոռացվում: Ամենօրյա գործածական բառերն ավելի դժվար են կորցնում իրենց հին արտասանությունը, և ավելի կայուն են դարձվածքներն ու ոճերը, քան քիչ գործածական բառերն ու դարձվածքները: Ուրեմն, առավել դյուրությամբ են ընկալվում հատկապես այն նոր փոխառությունները, որոնց համարժեքները բարբառը նախկինում չի ունեցել:

Օրինակ, դպրոցների տարածման հետ բարբառի բառապաշարն է մուտք գործում "թըպրօց" բառը, սակայն նոր ներմուծված բառն արդեն չի ենթարկվում բարբառի նախկին հնչյունական օրենքներին, այլ՝ արտասանվում է այնպես, ինչպես շրջապատի մեծամասնությունն է գիտակցում: 1) Այլապես արևմտահայ զրափանից վերցված թըպրօցը պիտի հնչեր արպրօց: Ինչպես տեսնում ենք, բոլոր երևույթները միմյանց հետ են շաղկապված, մի փոփոխությամբ պայմանավորված է հաջորդ փոփոխությունը: Երբեմն նոր արտասանություն ունեցող մի քանի բառեր համաբանությամբ իրենց ետևից կարող են առնել նման բառերի ամբողջ շարքը:

Նոր շրջապատի ազդեցության արդյունք պիտի համարել նաև գերդաստանի կամ բարեկամության հավաքականություն ցույց տվող նախկին բազմաթիվ հոգնակեղաներից մեկի՝ էնք—ի հաղթանակը: Հին սերունդը բացի 1. "Դպրոց" նշանակությամբ բարբառս օգտագործում է ուստա բառը:

էնք-ից գործածում է նաև -անք, -ունք, -ընք, -օնք հոգնակերանները, որոնց ծայնավորները ներդաշնակության օրենքով համաձայնվում են կցված բառերի արմատական ծայնավորներին, ինչպես՝ Մէլքումէնք, Զըլարօնք, Հափէտունք, Հայկազանք և այլն: Մինչդեռ նոր սերունդը գործածում է միայն -էնք-ը և վերոհիշյալ հավաքականները բացառապես -էնք-ով է կազմում, Օրինակ՝ Մէլքումէնք, Զըլարէնք, Հափէտէնք, Հայկազէնք և այլն:

Այս սրահայթին նպաստող դարձյալ երկու պայմաններ են եղել, որոնցից մեկը ծայնավորների ներդաշնակության օրենքի խախտումն է, իսկ մյուսը՝ նոր շրջապատի կը մյուղի բարբառների և զրականի համաբանությունը: Իսկ վերջին հաշվով փոփոխության արժեքը ոչ միայն ձևաբանական է, այլև՝ նյութական:

Բարբառում առկա հոլովական գուգածների և քաղացած ոճերի մեջ նույնպես նկատելի է նոր միջավայրի ազդեցությունը: Օրինակ, շափաթ "շաքաթ" բառը մերթ փոփոխվում է շափթէն, մերթ՝ շափաթվան ձևերով, ինչպես՝

Շափթէն մէշ մին հէղ նէլըս էմ հէզուս քուշտու "Շաքաթվա մեջ մի անգամ զնում եմ մորս մոտ":

Կամ՝ Շափաթվան մէշ մին հէղ նէլըս էմ հէզուս քուշտու:

Որոշ դեպքերում նոր փոխառությունը հնի ազդեցության տակ միշտ չի արտասանվում, օրինակ, վերստին փոխառյալ փրժիշկ "քմիշկ" բառը բարբառում եղած փրժիշկ-ի ազդեցությամբ դարձել է փիժիշկ: Սակայն նման փաստերը առանձին դեպքեր են և դեռևս որակ կազմել չեն կարող:

Ամփոփելով վերոհիշյալ բոլոր փոփոխությունները, գալիս ենք այն եզրակացության, որ Բուրդուրի բարբառը, շուրջ 800 տարի զանվելով կը մյուղի և արևմտահայ զրական լեզվի միջավայրում, զերծ չի եղել քերականական, նշյունական կամ բառապաշարային որոշ ազդեցություններից: Միևնույն ժամանակ պահանջելով իր սերած միջավայրից ժառանգած ձևաբանական և նշյունաբանական հիմնական օրենքները, հետագայում զարգացել է իբրև մի նոր բարբառ՝ ձևավորման ընթացքում հանդես բերելով նոր՝ նեքթին օրինաչափություններ, իսկ հիմնականում՝ արևմտահայ զրական լեզվին մոտենալու ձգտում:

Ինչպես հայտնի է, հայերենն իր 60 բարբառներով ու բազմաթիվ խոսվածքներով կամ ենթաբարբառներով՝ աշխարհի բարբառաշարուստ լեզուներից մեկն է: Սակայն, ի տարբերություն մյուս լեզուների, հիմնականում պատմական անբարենպաստ հանգամանքների պատճառով, նրա բարբառների մի մասը թերևս վերջնականապես ձևավորվել է պատմական

Հայաստանի սահմաններից դուրս, ինչպես՝ Առախալ, Գոլիս, Նոր Նախիջևան, Նոր Զուղաս, Նիկոմեդիա, Աթանոզ, Սիվրի-Քասաբ, Բուրդուր և այլն:

Քանի որ այս բոլոր գաղթաբանների հայությունը դուրս է եկել բուն Հայաստանից, և սակայն ոչ մի Նոր գաղթավայրի բարձրորդ Նույնը չի մընացել իր սերած միջավայրի բարձրագույն, ապա մնում է ենթադրել, որ այդ գաղթաբանների բարձրությունը հիմնականում ձևավորվեցին վերջին հարյուրամյակների ընթացքում՝ Նոր միջավայրի, Նոր պայմանների ու հանգամանքների ազդեցության ներքո, ուր հանդիպել են ամենախայտաբղետ բարձրությունների ու խոսվածքների ներկայացուցիչներ, և տեղի է ունեցել քերականական, հնչյունական ու բառակազմական տարբեր օրենքների "սինթեզում":

Սակայն, "նորաստեղծ" բարձրությունը, լինելով տարբեր բարձրությունի, խոսվածքների լեզվական իրողությունների մի համադրություն, միաժամանակն այդ օրինաչափությունների միջին թվաքանականը չեն, այլ քանակապես սովոր կողմի՝ հաղթանակած բարձրագույն, Նոր տարբերակը, որը հարստացել է տարալուծված կողմի որոշ ոմբերով, առանձին բառերով կամ ընդհանուր երանգով:

Գոնե այդպես է ընթացել Արևմտյան Անատոլիայում, պատմական Բուլթանիա գավառում տեղադրված մեկ տասնյակից ավելի բարձրությունների ձևավորման պատմությունը:

Այդ բարձրություններն իրենց երբեմն անկրկնելի հնչյունական կամ քերականական հետքերով են երևում, երբեմն էլ նմանվելով միմյանցից անկախ ստեղծված օրենքներով, լեզվական շատ անբացատրելի երևույթների բանալի են դառնում՝ հուշելով նաև լեզվի ներքին զարգացման հետագա ուղիների մասին:

Սակայն, ցավոք սրտի, մինչև օրս էլ հայ բարձրագիտությունն ու հայագիտությունը պաշտօն չափով չեն անդադրադադրում Արևմտյան Անատոլիայի բարձրությունների թեկուզ և թուղթիկ նկարագրությունը, եթե չհաշվենք Հ.Ամառյանի "Քննություն Գոլսահայ բարձրագույն" ¹⁾ մենագրությունը և Ասլանբեգի ²⁾ բարձրագույն ոչ գիտական տառադարձությամբ հրապարակված 20 էջանոց նկարագրությունը:

Մինչդեռ, այսօր՝ հայ բարձրությունների քառասունամյա շախմատին, անհետաձգելի խնդիր է դարձել վերոհիշյալ բարձրությունների անդամ կորստից փրկելը:

Այդ անհետացող բարձրություններից մեկը կորստից փրկելու մի համաս

1. Հ. Ամառյան, Քննություն Գոլսի բարձրագույն, Երևան, 1940, Երևանի պետհամալսարան,

2. Հ. Ամառյան, Քննություն Ասլանբեգի բարձրագույն, Վիեննա, 1898, էջ

փորձ է նաև մեր "Բուրդուրի բարձրորդ" աշխատությունը, որի նկատմամբ ունենալիք ու քննությունից հանված եզրակացությունները ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն ունեն պատմական Հայաստանից դուրս կազմավորված ու զարգացած մեր մյուս բարձրագույն գոյություն պրոցեսը միշտ հասկանալու տեսականից:

Վերջապես, ի մի բերելով բարձրագույն մասնագիտական, նոր բարձրագույն ձևավորման ու զարգացման վերաբերյալ առկա եզրակացությունները՝ կարող ենք ենթադրել, որ բարձրագույնի համեմատաբար անխառն վիճակն ապահովվում է գլխավորապես մեծաքանակ բնակչության ու կղզիացած համայնքների կամ թաղերի առկայության դեպքում, ուր առօրյական շրջանում միմյանց հետ ավելի է մեծ, քան այլևայլ բարձրագույնի ներկայացուցիչների հետ. այս դեպքում թուլանում է ոչ միայն զրական լեզվի, այլև տեղական իշխող բարձրագույնի ներգործությունը:

Օրինակ, Արարատյան բարձրագույն ավելի անաղարտ է պահպանվել իրանում, ուր գտնվում է այն արդեն 350 տարի, շնորհիվ կենտրոնացած բնակչության ու միատարր թաղերի, իսկ բուն Արարատյան դաշտում նույն բարձրագույնի փոփոխություններ է կրել հենց թեկուզ բառապաշարի տեսականից:

Տրական հոլովը, ինչպես արդեն նշվեց, ձևով նման է որոշյալ սեռականին, ինչպես օրինակ՝ էս տանձըն ծառն ա "Այս տանձի ծառն է" / սեռական հոլով, որոշյալ առում /:

Քարը կըպավ տանձըն "Քարը դիպավ տանձին" /Տրական հոլով/:

Անձի անվան դեպքում տրականը նմանվում է հայցականին:

Հայցականը իրի անվան դեպքում ձևով նման է ուղղականին, սակայն նախադասության մեջ ստացած պաշտոնով տարբերվում է նրանից: Անձի անվան դեպքում, ինչպես արդի գրական լեզվում է, նմանվում է տրականին:

Բացառական հոլովը բնի երկու ձև՝ պարզ և բաղադրյալ: Պարզ բացառականն ունենում է -էն, հազվադեպ՝ -մէն վերջավորությունը, որը դրվում է ուղղականի վրա: Իսկ բաղադրյալ բացառականը կազմվում է տրականից և անէ մասնիկից: Ակադ. Հ. Ամառյանի բացատրությանը, այս անէ ետադրությունը ծագել է գրաբարյան ցուցական դերանունների բացառականի վերջավորությունից, որն Բեռնարդին գիտակցվել է իբրև անկախ բառամասիկ¹⁾: Այդ մասնիկը զանազան ձևափոխություններով փոխարինվում է ղարաբարյան միջավայրին առնչվող բարքառներում անա, մնա, իսկ ղարաբարի բարքառում՝ անէ ձևով²⁾, որը նույնն է Բուրդուրի Բեռ:

Անէ ետադրությունն արտասանվում է իր առանձին բառային շեշտով և ժայնավորների ներդաշնակության օրենքին այն չի ենթարկվում:

Գործիական հոլովի վերջավորությունն է օվ, որը դրվում է բառի փոքի վրա. այն չի տարբերվում գրական լեզվի գործիականի կազմություններից:

1. Հ. Ամառյան, Լիակատար քերականություն հ. I. հատոր 2-րդ էջ 58-59:

2. Ա. Ղարիբյան, Հայ բարքառագիտություն, Երևան, էջ 145:

ներգոյական հոլովն ունի երկու ծանօթագրութիւն: Պարզ ներգոյականի վերջավորութիւնն է ում/ըմ, որը կցվում է քառի հիմքին, իսկ քաղաղոյալ ներգոյականը կազմվում է որոշյալ սեռականից կամ արականից՝ մէջ, միշին "մեջ" ետադրութեան հարադրմամբ /սեռ միշում/:

Օրինակ՝ իջուն մէջ մին փերիկ սիպտէկ տար ըմ ցանէլ "Այգու մեջ մի քիչ շողգամ եմ ցանել": իջումը նըստէլ իմ "Այգում նստել էի": Ծանոթութիւն.- ներգոյական կազմող մէջ "մեջ" ետադրութիւնը երբեմն համաձայնվում է հոլովով գոյականի հետ՝ ստանալով տրականի կամ ներգոյականի վերջավորութիւն, ինչպես՝ Ժիմիլըս իջուն միշին ա "Քուլ-ըմ այգու մեջ է": Կամ՝ իջում միշում միգիս ու միքիս ըն նըստած "Այգու մեջ հայրս ու մայրս են նստած":

Ինչ խոսք, որ ներգոյական հոլով կազմող հայերենի մեջ ետադրութեան այս յուրօրինակ համաձայնութիւնը գոյականի հետ, հասուկ է միայն այս քարքառին և կազմում է նրա առանձնահատուկ կողմերից մեկը:

Հ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ

195. Հոլովումները որոշվում են եզակի կամ հոգնակի սեռականի վերջավորութեամբ: Սեռական հոլովը Բուրդուրի քարքառում ունենում է ի/ը, ու, օլ, օր, վա, աւ, ց վերջավորութիւնները կամ վերջամասնիկները, ըստ որոնց էլ լինում է յոթ հոլովում:

Ծանոթութիւն. 3.- Եզակի թվում այլևայլ հոլովումների պատկանող գոյականները հոգնակի թվում ենթակվում են միայն "ու" կամ "ց" հոլովում:

Ծանոթութիւն 2.- Քերման ժամանակ, երբ հոլովիչն ավելանում է քառի վրա, որպես կանոն, շեշտը տեղափոխվում է վերջնիւթը վրան:

Ի/Ը ՀՈԼՈՎՈՒՄ

196. Ի/ը հոլովումը քարքառիս ամենատարածված և ամենագործուն հոլովումներից մեկն է: Այն համապատասխանում է արդի հայերենի "ի" հոլովմանը: Ի հոլովման ի տարբերակին պատկանող գոյականները եզակի և նորոշ սեռականում ունենում են ի վերջավորութիւնը, արականում՝ ին, պարզ քայտականում՝ էն /մէն/, գործիականում՝ օվ, պարզ ներգոյականում՝ ում/ըմ: Բաղադրյալ քայտականը կազմվում է որոշյալ սեռականից կամ տրականից՝ անէ ետադրութեամբ: Իսկ քաղաղոյալ ներգոյականը՝ տրականից կամ որոշյալ սեռականից և մէջ, միշին, միշում ետադրութեամբ:

Ի ԴՈԼՈՎՄԱՆ Ի ՏԱՐԲԵՐԱԿԻ ՏԱԽՏԱԿ

ԵԶԱԿԻ ԹԻՎ

Ուղղ.	Էնգիգ/ը/	էծ/ը/
Սեռ.	Էնգի-վ/ն/	էծի/ն/
Տր.	Էնգիգին	էծին
Հայց.	Էնգիգ/ը/	էծ/ը/
Բաց.	Էնգիգէն, Էնգիգին անէ	էծէն, էծին անէ
Գործ.	Էնգիգով	էծով
Ներգ.	Էնգիգում, Էնգիգին մէջ,	էծում, էծին մէջ,
	Էնգիգում միշում	էծում միշում

ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ

Ուղղ.	Էնգիգնէր/ը/	էծէր/ը/
Սեռ.	Էնգիգնէրուն	էծէրուն
Տր.	Էնգիգնէրուն	էծէրուն
Հայց.	Էնգիգնէր/	էծէր/
Բաց.	Էնգիգնէրուն անէ, Էնգիգնէրէն	էծէրէն, էծէրուն անէ
Գործ.	Էնգիգնէրով	էծէրով
Ներգ.	Էնգիգնէրը, Էնգիգնէրուն միշին, էծէրուն մէջ, միշին,	էծէրում միշում

Այսպես են յոլովում այն բոլոր գոյականները, որոնք ունեն արմատական է կամ ի "թեթա" ծայնավորներ, ինչպես օրինակ՝ ալծաէծ, էգաէթ, էշաէշ, չիրաչիր, ծմերուկածիմէրիկ, քոյրաճիճիր/ճիր, փայափէղ, ծմերուծիմէն, սերկահիւսինկէվիլ, դանակաւէնէկ և այլն:

197. Ի յոլովման ի տարբերակով են յոլովում նաև բոլոր վերացական գոյականները, որոնք ունեն -ուրիւնաութէն վերջածանց, ինչպես օրինակ՝ արսնութիւնաարսութէն, մարդկութիւնամարթկութիւն, աստութիւնաաստութէն, ընկերութիւնաինկէրութէն, երեխայութիւնաըրեութէն/ըրութէն և այլն: -ութէն վերացական ածանցով վերջավորող գոյականների յոլովման պատկերն է՝

ԵԶԱԿԻ ԹԻՎ

		ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ
Ուղղ.	ըրութէն/ը/	ըրութէնէր/ը/
Սեռ.	ըրութէնի/ն/	ըրութէնէրուն/ն/
Տր.	ըրութէնին	ըրութէնէրուն
Հայց.	ըրութէն/ը/	ըրութէնէր/ը/
Բաց.	ըրութէնէն, ըրութէնին ասէ	ըրութէնէրուն անէ
Գործ.	ըրութէնով	ըրութէնէրով
Ներգ.	ըրութէնում, ըրութէնին մէջ	ըրութէնէրուն մէջ

ի հոլովման երկրորդ՝ ը տարբերակն արդյունք է բառավերջի ի ժայ նավորի կարմ արտասանության, որը կատարվում է ավյալ բառում առկա արմատական "ծանր" ժայնավորների ազդեցությամբ: Սա արդյունք է եղել Բուրդուրի բարբառում գործող երբեմնի ժայնավորների ներդաշնակութային օրենքի առկայության, որը սակայն հետագայում խախտվել է ու այդ պատճառով էլ այս հոլովման կանոններում նկատվում են բազմաթիվ շեղումներ՝ հօգուտ ի տարբերակի կամ նույնիսկ այլ հոլովումների:

Ի հոլովման ը տարբերակին պատկանող գոյականների եզակի անորոշ սեռականը ձևով նման է ուղղական-հայցական որոշյալին: Այս ձևերի իմաստային տարբերակումը հնարավոր է դառնում միայն նախադասության մեջ, որ կախված է բառի շփշտից ու նախադասության մեջ ունեցած դիրքից: Օրինակ Հայը մօթը մեկի էլ է "Հայի կտորը մզկոտել է" նախադասության մեջ հայը և մօթը բառերը թեև ձևով նույնն են, սակայն տարբերակվում են թե՛ շարադասությամբ, թե՛ շեշտադրությամբ. հայը գոյականը դրված է սեռական հոլովով և նախորդում է մօթը գոյականին, որ դրված է ուղղականով: Բայի այդ՝ շեշտը զանվում է հայը բառի ը՝ ժայնավորի, իսկ մօթը բառի՝ օ ժայնավորի վրա:

Ի հոլովման ը տարբերակի ժամանակ որոշյալ առման սեռական, տրական, բացառական հոլովները եզակի թվում ձևով միմյանցից չեն զանազանվում, օրինակ՝

ԵԶԱԿԻ ԹԻՎ

Ուղղ.	հայ/ը/	տանձ/ը
Սեռ.	հայը/ն/	տանձը/ն/
Տր.	հայըն	տանձըն
Հայց.	հայ/ը/	տանձ/ը/
Բաց.	հայըն անէ, հայէն	տանձըն անէ, տանձէն
Գործ.	հայօվ	տանձօվ
Ներգ.	հայըն մէջ, հայըմ, հայըն մէջըն, հայըմ մէջըմ	տանձըն մէջ, տանձըմ, տանձըն միջին, մէջըմ

ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ

Ուղղ.	հայէր/ը/	տանձէր/ը/
Սեռ.	հայէրու/ն/	տանձէրու/ն/
Տր.	հայէրուն	տանձէրուն
Հայց.	հայէր/ը/	տանձէր/ը/
Բաց.	հայէրուն անէ, հայէրէն	տանձէրուն անէ, տանձէրէն
Գործ.	հայէրօվ	տանձէրօվ
Ներգ.	հայէրում, հայէրուն մէջ	տանձէրում, տանձէրուն մէջ

Այս հոլովմանն են պատկանում մեծ թվով գոյականներ, որոնց արմատական ձայնավորները "ծանր" են, ինչպես՝ ամանաման, ժամածամ, պատապտապ, աղալաղա, տանձատնձ, քամակքամակ, քանձքն, կթթակթ, թթթթթթ, մարդամարդ, ցախպախ, աղաղ, վախձվախ, շաղաշաղ և այլն:

Կամ այնպիսի բառեր, որոնք հնչողական փոփոխություններ կրելուց հետո են ստացել "ծանր" ձայնավորներ, ինչպես՝ կոհեղեղը, քիթքեղնթ, երեխալըրիթ/ըրիթ, կին/իկ/ակընդկ և այլն:

Ի հոլովման ը տարբերակով են հոլովվում նաև լույս, լույ, լույս և նման վերջածանցներ ունեցող բառերը, ինչպես՝ ազգականապարական, զաղթականաթախական, զիւղականակ էղական "գյուղացի", ամանածական և այլն, օրինակ՝

	ԵԶԱՆԻ ԹԻՎ	ՀՈԳՆԱՆԻ ԹԻՎ
Ուղղ.	կ'էղական/ը/	կ'էղականներ/ը/
Սեռ.	կ'էղականը/ն/	կ'էղականներու/ն
Տր.	կ'էղականըն	կ'էղականներուն
Հայց.	կ'էղականը/ն/	կ'էղականներուն
Բայ.	կ'էղականըն անէ, կ'էղականէն	կ'էղականներն անէ
Գործ.	կ'էղականով	կ'էղականներով
Ներգ.	կ'էղականըն մէջ	կ'էղականներուն մէջ, միշին

204. Ի հոլովման ը տարբերակով են հոլովվում նաև այն հատուկ անունները, որոնց արմատական ձայնավորները ծանր են կամ հնչողականփոփոխելուց հետո են դարձել այդպիսին, օրինակ՝ Համբարձում, Համփոքրում, Յակովբ, Հակոփ, Ժիրայր, Ժըրայր, Մկրտիչ, Մեկըր, Հրայր, Հըրայր, Գալոս, Գոլոս, Գալլոզ, Վարդան, Վարթան, Մարիամ, Մայրան և այլն:

205. Ի հոլովման ը տարբերակով են հոլովվում նաև փոխառյալ այն բոլոր հատուկ և հասարակ գոյականները, որոնք ունեն վերոհիշյալ կետերում նշված առանձնահատկությունները:

ՈՒ ՀՈԼՈՎՈՒՄ

206. Ու հոլովումը բարբառիս ամենատարածված և ամենագործուն հոլովումն է, որին ենթարկվում են հոգնակի թվում բոլոր գոյականները՝ բացառությամբ ց հոլովման ենթարկվողներից: Այս հոլովման պատկանող գոյականների բացառական, գործիական և ներգոյական հոլովների վերջավորությունները նույնն են մյուս հոլովումների հետ: Բացառականը կարող է կազմվել և ուղղականից, և սեռական-տրականից՝ անէ ետադրության հարադրմամբ: Սեռականը գերազանցապես օգտագործվում է որոշյալ ժամամբ, ինչպես՝ Ծէր իբրեն ամսձը լժվ և "Չեր այգու ամսձը լավ է":

Ծ Ձ Ա Կ Ի Ք Ի Վ

Ուղղ.	կառու/ն/	ծու/ն/
Սեռ.	կառուվում/ն/	ծուվում/ն/, ծույուն/ն/
Տր.	կառուվուն	ծուվուն, ծույուն
Հայ.	կառու/ն/	ծու/ն/
Բայ.	կառուվուն անէ	ծուվուն անէ
	կառուվուն անէ	ծույուն անէ
Գործ.	կառուվով, կառավով	ծուվով, ծույով
Ներգ.	կառուվուն մէջ	ծուվուն մէջ, ծույուն մէջ

Հ Ո Գ Ն Ա Կ Ի Ք Ի Վ

Ուղղ.	կառվընէք/ը/	ծուվէք/ը/
Սեռ.	կառվընէքուն	ծուվէքուն
Տր.	կառվընէքուն	ծուվէքուն
Հայ.	կառվընէք/ը/	ծուվէքուն անէ
Բայ.	կառվընէքուն նէ	ծուվէքով
Գործ.	կառվընէքով	ծուվէքուն մէջ
Ներգ.	կառվընէքում	ծուվէքում
	կառվընուքուն մէջ	

210. Ինչպես հայտնի է, զրաբարում կենդանի նշանակող բառերի մեծ մասը պատկանում էր ու հոլովմանը: Բուրդուրի բարբառում ևս այդ կարգի բառերի մեծ մասը ենթարկվում է ու հոլովման: Օրինակ՝ հաւ-հաւ, կու-կով, զամէշ-զամէշ, օմ/օյ, խոզ-խօզ, շուն-շուն/վերջինս հոլովվում է նաև ան հոլովմամբ/:

Ծանոթութիւն. Այս հոլովման պատկանող երկվանկ բառերի երկրորդ վանկարարը, հոլովման ժամանակ շեշտից զրկվելով սղվում է, օրինակ՝

Ծ Ձ Ա Կ Ի Ք Ի Վ

Ուղղ.	զամէշ/ը/	հավ/ը/
Սեռ.	զամշում/ն/	հավում/ն/
Տր.	զամշուն	հավուն
Հայ.	զամէշ/ը/	հավ/ը/
Բայ.	զամշէն, զամշուն անէ	հավէն, հավուն անէ
Գործ.	զամշով	հավով
Ներգ.	զամշուն մէջ	հավուն մէջ

ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ

Ուղղ.	զօմէշնի/ն/	հավէր /ը/
Սեռ.	զօմէշնուն	հավէրուն
Տր.	զօմէշնուն	հավէրուն
Հայց.	զօմէշնի/ն/	հավէր/ը/
Բաց.	զօմէշնուն անէ	հավէրուն անէ
Գործ.	զօմէշնէրօվ	հավէրօվ
Ննրգ.	զօմէշնուն մէջ	հավէրուն մէջ

211. Ու իւլովման են պատկանում նաև այն քառերը, որոնց հոգնակին կազմվում է էր, նէր, նի հոգնակերտներով, ինչպես՝ ուտողնի "ուտողներ", զօմէշնի "զօմէշներ", կէղականնի "կէղականներ", աղէր "աղեր", էծէր "այծեր", բարէր "բարեր", իքինի, "այգիններ", իքինէր "այգիններ" և այլն:

Ժանոթութիւն - նի հոգնակերտն ստացած քառերի իւլովման ժամանակ երբեմն նի-ն փոխարինվում է նէր-ով հատկապես բացառական, գործիական իւլովներում, օրինակ՝ ուղղ. իքինի, սեռ. իքինուն, տր.- իքինուն, բաց.- իքինուն անէ կամ իքինէրուն անէ, գործ.- իքինօվ // իքինքօվ, իքինէրօվ, ննրգ.- իքինուն մէջ կամ իքինէրուն մէջ և այլն:

212. Ու իւլովման են պատկանում նաև նի հոգնակերտն ստացած գոյականները, որոնց գործիականի վերջավորութիւնը համապատասխանում է նէր հոգնակերտն ստացող ձևերին: Գլխավորապես դա կատարվում է այն պատճառով, որ այդ փոխառյալ քառերի հոգնակին գործածվում է հավասարապես և նի, և նէր մասնկներով, օրինակ՝

ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ

Ուղղ.	զաքիթնի/ն/	կամ	զաքիթներ/ը/
Սեռ.	զաքիթնուն	կամ	զաքիթներուն/ն/
Տր.	զաքիթնուն	կամ	զաքիթներուն
Հայց.	զաքիթնուն	կամ	զաքիթներուն
Բաց.	զաքիթնուն անէ	կամ	զաքիթներուն անէ, զաքիթներէն
Գործ.	զաքիթնէրօվ	կամ	զաքիթնէրօվ
Ննրգ.	զաքիթնուն մէջ	կամ	զաքիթներուն մէջ

213. Ու հոլովմանն են պատկանում նաև փոխառյալ ջի ածանցով կազմված արհեստներ և զբաղմունք ցույց տվող գոյականները, ինչպես օրինակ՝ դէմիրջի "երկաթագործ կամ դարբին", դուբենջի "խանութպան" հէլվաջի "հրուշակավաճառ", Բժօմուրջի "ածխավաճառ կամ ածխագործ", Ֆըրընջի "փապան" և այլն:

214. Ու հոլովմամբ են հոլովվում նաև մի շարք այլ գոյականներ, որոնցից միականկերում առկա է օ ծայնավորը, ինչպես շորաշօր, խոտախօտ, մոթաձօթ, հովաֆօվ, հոտաֆօղ, հողաֆօղ, ինչպես նաև ցավալի, մարդամարթ, ամիսամիս, տարիտարի/ վերջինները հոլովվում են նաև վա հոլովմամբ/ բառերը: Այս կարգի բառերի եզակի թվի հոլովման պատկերն է՝

	Ե Զ Ա Ն Ի	Թ Ի Վ	Հ Ո Գ Ն Ա Ն Ի	Ք Ի Վ
Ուղղ.	խօտ/ը/		ամիս/ը/	խօտէր/ը/
Սեռ.	խօտու/ն/		ամսու/ն/	խօտէրուն
Տր.	խօտուն		ամսուն	խօտէրուն
Հայց.	խօտ/ը/		ամիս/ը/	խօտէրը
Բաց.	խօտէն, խօտուն անէ		ամսէն, ամսուն անէ	խօտէրուն անէ
Գործ.	խօտով		ամսով	խօտէրով
Ներգ.	խօտուն մէջ, խօտումամսուն մէջ, ամսում			խօտէրում, խօտէրուն մէջ

Օ շ հոլովում

215. Օ շ հոլովմամբ հիմնականում հոլովվում են ազգականութիւն և բարեկամութիւն ցույց տվող ընդամենը 5-6 բառ, ինչպես տալաալ "ամուսնու բույր", տէրատէր, անէրաանէր, ընկերաինկեր/ինգեր, տանտէրատնատէր, էֆէր "հայր կամ մեծ եղբայր": Այս հոլովման պատկանող բառերի բացառական և զործիական հոլովները երբեմն կազմվում են սեռականից, երբեմն՝ ուղղականից: Այս հոլովման պատկանող գոյականները հանդիպում են նաև ի հոլովմամբ, որը ցույց է տալիս ի հոլովման տիրապետող ուժը ինչպես այս, այնպես էլ մյուս հոլովումների նկատմամբ:

Հոլովման օրինակ՝

	Ե Զ Ա Ն Ի	Թ Ի Վ
Ուղղ. տալ/ը/	էֆէր/ը/	Բաց. տալօշէն, տալօշըն, էֆէրօշէն
Սեռ. տալօշ/ը/ տալու էֆէրօշ /ը/		էֆէրն անէ
Տր. տալօշ/ը/	էֆէրօշ/ը/	Գործ. տալօշով, տալով, էֆէրօշով, էֆէրով
Հայց. տալօշը	էֆէրօշը	Ներգ. տալօշ մէջ, էֆէրօշ մէջ

Հ Ո Վ Ն Ա Կ Ի Թ Ի Վ

Ուղղ.	տալէր/ը/
Սեռ.	տալէրու
Տր.	տալէրու
Հայ.	տալէրու
Բայ.	տալէրու անէ, տալէրէն
Գործ.	տալէրով
Ներգ.	տալէրու մէջ

Յէս տալըս անէ մէծ իմ: Ո՛վէն տալովը պարծանըմ ա:

Օր Ի ո լ ո վ ու մ

216. Օր Ի ո լ ո վ ու մ ն են պատկանում ընտանիքի անդամներ և բարեկամութիւնը ցույց տվող մի քանի բաներ, ինչպես՝ եղբայրախաբէր/էփէր, բոյրաբեր, սկեսուրահսկիսուր, տալգրաթէքըր /ընդամենը 4 բառ/: Փաստորեն սա ներդրական Ի ո լ ո վ ու մ ն է, ուր վերջին փակ վանկի ձայնավորները ը ձայնորդից առաջ վեր են անվում Օ-ի: Բացահայտ և գործիական Ի ո լ ո վ ները կազմվում են սեռականից մէջ ետադրութեամբ: Հոլովման օրինակ՝

Ե Զ Ա Կ Ի Թ Ի Վ

Ուղղ.	քիւր	իսկիսուր
Սեռ.	քիւօր	իսկիսոր
Տր.	քիւօր	իսկիսոր
Հայ.	քիւօր	իսկիսոր
Բայ.	քիւօրն անէ	իսկիսորն անէ
Գործ.	քիւօրով	իսկիսորով
Ներգ.	քիւօր մէջ	իսկիսոր մէջ

Ծանոթութիւն - Օր Ի ո լ ո վ ու մ ն պատկանող գոյականների հանդիպում են նաև ի Ի ո լ ո վ ու մ ն:

217. Ինչպես գրական հայերենում, այնպես էլ Բուրգուրի բարբառում վա Ի ո լ ո վ ու մ ն են պատկանում ժամանակ ցույց տվող գոյականները, օրինակ՝ գիշերաքըշէր, ցերեկացօրէկ, երեկաէրէկ, առաւօտաքըշաւօտ, շաբաթաքըշէփաթ, աշունաշուն/ը/, զարունակէրունը/բարունը, մամունաձիմէն, օրաօր, ամիսամիս, ամառնամառ և այլն:

Բացահայտ, գործիական Ի ո լ ո վ ների գուգահեռ ձևերը ցույց են տալիս, որ վա Ի ո լ ո վ ու մ ն պատկանող գոյականները նույնպես աստիճանաբար հակվում են դեպի ի Ի ո լ ո վ ու մ ն: Օրինակ՝ բացահայտ Ի ո լ ո վ ի

օրվանէն և օրէն, ներգոյական հոլովի օրվանում և օրում
վա հոլովման պատկերը եզակի թվում`

Ուղղ. օր/ը/	բըշեր/ը
Սեռ. օրվա/ն/	բըշերվա/ն/
Տր. օրվան	բըշերվան
Հայց. օր/ը/	բըշեր/ը/
Բաց. օրվանէն, օրէն	բըշերվանէն, բըշերն անէ
Դործ. օրով, օրվանով	բըշերվանով, բըշերով
Ներգ. օրում, օրվանում	բըշերում, բըշերվան միչին, միչում
	օրվան միչին

Ծանոթութիւն - վա հոլովման պատկանող գոյականները կարող են
հոլովվել նաև ի հոլովմամբ: Այսպես`

Եզկի	Թիվ	Հոգնակի	Թիվ
Ուղղ. ցիրէկ/ը		ցիրէկնի/ն/	
Սեռ. ցիրէկի		ցիրէկնուն	
Տր. ցիրէկին		ցիրէկնուն	
Հայց. ցիրէկ/ը		ցիրէկնիս/	
Բաց. ցիրէկին անէ		ցիրէկնուն անէ	
Գործ. ցիրէկով		ցիրէկնետով	
Ներգ. ցիրէկում, ցիրէկին մէջ		ցիրէկնետում, ցիրէկնետումը	

վա հոլովման պատկանող ժամանակ ցույց տվող գոյականներից մի
քանիսը հանդիպում են նաև ան հոլովմամբ: Օրինակ` Ծիմէրան կիսին,
ծիմէրվան կիսին, ծիմէրին կիսին և այլն:

Ան հոլովում

218. Բուրդուրի բարբառում ան հոլովման են ենթարկվում զրաբար-
յան ու վերջնահանգն ունեցող գոյականները, ինչպես օրինակ` կուռն-
կուռ, դուռնառուռ, ծեռնածէր, լեռնալէռ, թռռնաթռռ, զառնակէր,
նուռնանուռ, ինչպես նաև մուկնամուկ գոյականը, որը հավելվածական
ն-ից առաջ ու ձայնորդի փոխարեն ունի կ:

Սեռական -տրականում այս բառերն ստանում են ան վերջավորութիւնը,
ըստ որում ան-ից առաջ հավելվածական ն-ն երբեմն չի պահպանվում: Բա-
ցառականում ունենում են էն կամ անէն վերջավորութիւնը, այսինքն`
բացառականի էն-ը կարող է դրվել թե՛ ուղղականի, թե՛ սեռական-տրականի

վրա: Գործիականի վնրջավորությունն է օվ: Ներգոյակունը կազմվում է գերազանցապես սեռականից ու մէջ հաղորդությունից:

Ծանոթություն.- Թեքման ժամանակ արմատական ու ծայնավորը վնր է անվում Ը-ի:

Ան հոլովման եզակի թվի պատկերն է՝

Ուղղ. տուռ/ը/	թօռ/ը/
Սեռ. տըրնան	թօրնան, թօրան
Տր. տըրնան	թօրնան, թօրան
Հայց. տուռ/ը/	թօրնան, թօրան
Բաց. տըրնէն, տըրնան անէ	թօրնան անէ, թօրնէն
Գործ. տըրնօվ, տուրօվ	թօրնանօվ, թօրնօվ
Ներգ. տըրնան մէջ, տըրնում	թօրնան մէջ, թօրան մէջ

219. Ան հոլովման պատկանող գոյականների շարքն ենք դասել նաև շուն և տուն գոյականները, որոնք սեռական-տրականում ան վնրջամասնիկն են ստանում ներքին թեքման պատճառով: Այս մեղանչումն արված է հիմնականում այդ կարգի այլ գոյականների քայակայության պատճառով: Շուն և տուն գոյականները հոլովվում են այսպես՝

ն զ Ա Կ Ի թ Ի Վ

Ուղղ.	շուն/ու/	տուն/ու/
Սեռ.	շան	տան
Տր.	շան	տան
Հայց.	շուն/ու/	տուն/ու/
Բաց.	շունէն, շանըն անէ շունըն անէ	տունէն, տունըն անէ, տանըն անէ
Գործ.	շունօվ, շունուվօվ	տունօվ, տընօվ, տունուվօվ
Ներգ.	շան մէջ	տան մէջ, տընում միչում

Շան անէ մին մազ պօկուլու թէր ա:

Ծանոթություն - կենդանի նշանակող կատու, լու, ծու, հավ քառերի համաքանությամբ տուն, շուն, մուկ քառերը երբեմն ենթարկվում են ամենազդեցիկ ու կամ ի հոլովումների օրինաչափություններին: Այսպես օրինակ՝ շունուվու պին "շան քուն", տունուվու հավ "տան հավ", մուկուվու ծէք "մկան ծազ", կամ՝ "տան հավ", "շան քունը", մըկնածէք, "մկան ծազ", տունի հավ "տան հավ" և այլն:

8 ԳՆԱԿԻՄ

220. 8 ԳՆԱԿԻՄԱՆ ՎԱՏԱԿԱՆՈՂ ԳՈՂԱԿԱՆՆԵՐԸ ՍԵՌԱԿԱՆ-ՄՐԱԿԱՆՈՒՄ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ Կ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԲԱՅԱՌԱԿԱՆՈՒՄ ՈՒՆԵՆՈՒՄ ԵՆ ԱՎԱՐԳ, ԱՎԱՐՋԱՎՈՐՈՒՄ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ: ԳԱՐԳ ԲԱՅԱՌԱԿԱՆԻ ՂԵՍԿՈՒՄ ԷՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՅՐԱԿՈՒՄ Է ՍԵՌԱԿԱՆԻ ՎՐԱ, ԻՍԿ ԲԱՐՋԱՎՈՐՈՒՄ ԳՆԱԿԱՆՈՒՄ ՎԱՅՐԱԿՈՒՄ Է ՆԱԱ ԱՆԷ ԵՄԱՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԳՈՐԾԻԱԿԱՆՆԵՐ ՍՈՎՈՐԱԲԱՐ ՈՒՆԵՆՈՒՄ Է ՕՎ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆԵՐԳՈՂԱԿԱՆԻ ԻՄԱՍՏՈՐ ՂՐԱՍՈՐՎՈՒՄ Է ԳԻՄՆԱԿԱՆՈՒՄ ՍԵՌԱԿԱՆԻ ԱՎԱՆ ԵՄԱՂՈՒԹՅԱՆ ԳԱՐՋԱՎՈՐՈՒՄ:

8 ԳՆԱԿԻՄԱՆ ԵՆԹԱՐԿՎՈՂ ԲԱՌԵՐԸ ՄԵԾ ՄԱՍԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ԵՆ ԳԱՌԱԿԱՆՈՒՆԵՐԻԿ ԿԱՄ ԸՆԴԱՆԻՐԻ ԱՆՂԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱԶԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԳՈՂԱԿԱՆՆԵՐԻԿ ԷՆՐ ԳԱՎԱՐՋԱԿԱՆ ԳՈՂԱԿԱՆՆԵՐԻ /ԿԱՄ ԳԱՎԱՐՋԱԿԱՆ ՕԳՄԱԶՈՐԾՎՈՂ ՆՐԱ ՄՅՈՒՍ ՄԱՐԶԵՐԱԿԱՆՆԵՐԻ՝ ԱՆՐ, ՕՆՐ, ԸՆՐ, ԻՆՐ, ՈՒՆՐ/ ՄԻՋՈՅՈՎ, ԿՅԱՅԵՍ ՕՐԻՆԱԿ՝ ԱԿՕՖԱՎԱԿՕՖԷՆՐ, ՄԱՅՐԱՆԱ՝ ՄԱՅՐԱՆԱՆՆԵՐ, ԻՍԿԻՍՈՒՐԱՎԱԿԻՍՈՒՐԷՆՐ, ԳԱՐԸՐԱՆՐ ԿԱՄ ԳԱՐԸՐԱՆՐ "ԳՈՐԱՐՈՒՄ-ՐԵՆՐ", ԳԱՐԸՐԱՆՐ ԿԱՄ ԳԱՐԸՐԱՆՐ "ԳՈՐԱՐՈՒՄ-ՐԵՆՐ", ԷՖԷՐԷՆՐ "ԳՈՐԱՐՈՒՄ-ՐԵՆՐ" ԿԱՄ ՄԵԾ ԵՂՐԱՅՐ" ԱՎԱՆ:

ԵՆԹԱՐԿՈՒԹՅՈՒՆ.- 8 ԳՆԱԿԻՄԱՆ ՎԱՏԱԿԱՆՈՂ ԳՈՂԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՐ, ԷՆՐ, ՕՆՐ, ՈՒՆՐ, ԸՆՐ, ԻՆՐ ԳԱՎԱՐՋԱԿԱՆ ԳՈՂԱԿԱՆՆԵՐԻ ՄՈՒԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ Է ԵՂԸ ԲԱՐԶԱՌԻ ՆԱԿԻՆՈՒՄ ՈՒՆԵՄԱԾ ԺԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐՂԱՇՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՆԵՐՎ, ՍԱԿԱՅՆ ՄՅՈՒՄ ՕՐԵՆՆԵՐԻ՝ ԳՆԱՌԱՅՈՒՄ ԳԱՐՋԱՐԵՆՈՒՄ ԳՆԱԿԱՆՆԵՐՈՎ ՄԻՐԱՎԱՆՈՂ Է ԳԱՐԾԵՆՐ ԷՆՐ-Ը, ՍԱԿԱՅՆ ՈՒՄ ԲԱՅԱՐՈՒՄ ԲԵՐ ԲԵՐ ԳՆԱԿԱՆՆԵՐՈՒՄ ԳՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՐ, ԸՆՐ, ՈՒՆՐ, ՕՆՐ, ԻՆՐ, ԷՆ ԿԱՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: 8 ԳՆԱԿԻՄԱՆ ԸՆՂԳԱՆՈՒՐ ՎԱՏԱԿԱՆՆԵՐ Է՝

	Ղ Ո Ր Ն Ա Վ Ի	Թ Ի Վ
ՈՒՂՂ	ԱԿՕՖԷՆՐ	ԿԱՄ ԳԱՐԸՐԱՆՐ
ՍԵՌԱ.	ԱԿՕՖԷՆՐ	ԿԱՄ ԳԱՐԸՐԱՆՐ
ՏՐԱ.	ԱԿՕՖԷՆՐ	ԿԱՄ ԳԱՐԸՐԱՆՐ
ՀԱՅԿ.	ԱԿՕՖԷՆՐ	ԿԱՄ ԳԱՐԸՐԱՆՐ
ԲԱՅԿ.	ԱԿՕՖԷՆՐ	ԿԱՄ ԳԱՐԸՐԱՆՐ
ԳՈՐԾ.	ԱԿՕՖԷՆՐ	ԿԱՄ ԳԱՐԸՐԱՆՐ
ՆԵՐԳ.	ԱԿՕՖԷՆՐ	ԿԱՄ ԳԱՐԸՐԱՆՐ

221. 8 ԳՆԱԿԻՄԱՆ ԵՆ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ՆԱԱ ՈՒՂՂԱԿԱՆՈՒՄ ԷՐԸ ԿՐԸԿԱՆԱԿԻ ԳՈՂԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՍՏԱՄԱԾ ԳՈՂԱԿԱՆՆԵՐԸ, ԻՆՂԱԿԱՆ ՄԻՋԻԿԱՎԱՐՈՒՄ, ՄՈՂԱՎԱՐՈՒՄ, ԳՈՂԱՎԱՐՈՒՄ, ԳՈՂԱՎԱՐՈՒՄ, ԻՆՂԱԿԱՆ ՆԱԱ ԱՆԻՐ, Թ ԳՈՂԱԿԱՆՈՒՄ ՈՒՆԵՄԱՆ ԿՐԸՆԱՆԻՐ, ԳՈՐԻՐ, ԽՐՆԱՄԻՐ, ԸՐԻՐ/ԸՐԻՐ Ա

այլ բառեր:

Ծանոթութիւն 1- Վերոհիշյալ բառերի հոգնակին կարող է կազմը-
վել նրբեմն նաև եզակի սեռականի վրայից, ինչպես ~ քիրօքիվէրք
կամ~ քիրօքիվօրանք//քիվօրէնք և այլն:

Ծանոթութիւն 2- Քեք հոլովներում, անկախ ուղղականում
ունեցած վերջավորութիւններից, նրանք ստանում են ան, էն, օն
կապակցութիւնները ց հոլովակերտից առաջ, ինչպես ըրէէք//ըխէք-
ըխօնց, խնամիք-խընամօնց և այլն:

Այդ կարգի բառերի հոլովման ընդհանուր պատկերն է՝

Հ Ո Գ Ն Ա Կ Ի Թ Ի Վ

Ուղղ. ըրէէք, ըխէք

Սեռ. ըրխօնց, ըխօնց

Տր. ըրխօնց, ըխօնց

Հայց. ըրխօնց, ըխօնց

Բաց. ըրխօնցէն, ըխօնցէն, ըրխօնցանէ, ըխօնցանէ

Գործ. ըրխօնցօվ, ըխօնցօվ

Ներգ. ըրխօնց մէշ, ըխօնց մէշ, միշին

Ծանոթութիւն 1- Վերոհիշ ալ հավաքականների համաքանությամբ ց
հոլովմամբ է հոլովվում նաև մարդիկամարթիք բառը
Ծանոթութիւն 2.- Այլ հոլովման պատկանող մի շարք բառեր, ինչպես
կատու-կատվընէք, շաքաթ-շափթընէք, առու-արվընէք զուգահեռաբար
հոլովվում են նաև այս հոլովմամբ և այդ դեպքում նրանց սեռական
հոլովմանը կազմվում են ուղիղ ձևերի վրա՝ անց, օնց վերջավո-
րութիւնների հավելմամբ: Օրինակ՝ շափթընէք-շէփթընէքանց-շէփթը-
նէքանց անէ և այլն:

Եզրակացութիւն

222. Ինչպես զրաբարի համեմատ ընդհանուր հայերենի հոլովման
համակարգն է պատմական զարգացման ընթացքում պարզեցման հասնել ,
այնպես էլ Բուլղոցի բարբառում հոլովական համակարգը ձգտել է
պարզեցման ու միօրինականացման: Այսպես օրինակ՝ բոլոր 7 հոլով-
ների համար էլ արդեն ընդհանուր են դարձել բացառականի էն, գոր-
ծիականի օվ և ներգոյականի ում//ւմ վերջավորութիւնները: Միայն

երկու հոլովներում՝ սեռականում և տրականում, դեռևս զգացվում են տարբերությունները:

Հոլովումների պարզեցման ու միօրինականացման ձգտմամբ էլ ամենատարածված ու ամենագործածական հոլովման արժեք է ստացել հոտկապես ու հոլովումը, որին ենթարկվում են եզակի թվում բոլոր գոյականների 30 տոկոսը, իսկ հոգնակի թվում՝ բոլոր գոյականները, քայտոռությամբ ց հոլովման պատկանողների: Ու հոլովումն աստիճանաբար իրեն է ենթարկել նախկինում այլևայլ հոլովումների պատկանող գոյականների մեծ մասը, որոնց նախկինում այլ հոլովումների պատկանելու մասին հուշում են քառացած ոճերի, առանցների ու դարձվածքների մեջ դեռևս պահպանվող զուգահեռ ծանրեր:

Երկրորդ ամենատարածված հոլովման արժեքն ունի ի//ը հոլովումը, որին նույնպես ենթարկվում են զգալի թվով գոյականներ, եզակի թվում: Մնացած հոլովումներն աստիճանաբար դուրս են մղվել գործածությունից և ստացել սահմանափակ կիրառություն: Այսպես օրինակ՝ օչ հոլովմամբ մնացել է ընդամենը 5 բառ, օր՝ 6, ան՝ 8 և վա՝ մոտ 15: Հստ որում, այս հոլովումներին պատկանող գոյականներից շատերն էլ զուգահեռաբար ենթարկվում են ու կամ ի հոլովումներին: Օրինակ վա հոլովման ենթարկվող բառերից մի քանիսլ հալասարապես գործածական են թն մեկ, թն մյուս հոլովումներով: Այսպես՝ ամսուն, ամսին կամ ամսըվան, շէփթուն, շէփթին, շէփթըվան և այլն: Ան հոլովման ենթարկվող զանազկ էր բառը հանդիպում է նաև ի հոլովմամբ, ինչպես՝ էս կ էրան պիրթ ա կամ՝ էս կ էրի պիրթ ա "սա զառան բուրդ է" և այլն, և այլն:

223. Հոլովման ժամանակ կարող է կատարվել ծայնավորների հնչյունափոխություն կամ սղում: Որպես կանոն, միավանկ բառերի ծայնավորները զրեթե չեն հնչյունափոխվում՝ բալառությամբ փակ վանկի ի և ու ծայնավորների, որոնք վեր են ածվում ը-ի: Օրինակ՝ միտքավըտըն, սիրտասըրտըն, քունքընին և այլն: Սակայն պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ վերորհիշյալ ծավերին զուգահեռ գործածական են նաև դրանց անհնչյունափոխ ծանրը, ինչպես՝ միտք-միտքին, սիրտ-սիրտին, քուն-քունին և այլն:

Հնչյունափոխությունը համեմատաբար ավելի լայն տարածում ունի երկվանկ բառերում: Հոլովելիս շեշտահաջորդ ծայնավորը թն՝ քաց, թն՝ փակ վանկերում սղվում է, օրինակ՝ զէտիկազէտկին, մածունա մածնի, շէպիկաշէպկին, պէփիրապէփրան "քավոր", չէմիչաչէմչի, պառավապարվըն, պտուկապտկըն, քաղաքաքաղքին, քամակաքամկին,

կտուրակը արան, էրին-էրնի, ճակատ-ճակտին: Նույն օրինաչափութ-
յանն են ենթարկվում նաև փոխառյալ բառերը, ինչպես՝ քէզիր-
քէզրան "ձի" և այլն:

Հ Ո Ղ

224. Բուրդուրի բարբառի որոշյալ հոգներն են նւն և ըւն:

Ծանոթություն,- Ներդաշնակության օրենքի համաձայն ըւն եր-
բեմն վեր է ածվում ու-ի՝ օրինակ՝ շունը շուննու, տունը տուն-
նու, ութը ռութու:

Բացի այս ն և ը որոշյալ հոգերից, մեծ գործածություն ունի
նաև միւսին անորոշ հոգը, որը անորոշություն է ցույց տալիս:

Որոշյալ հոգեր են ստանում ինչպես գոյականները, այնպես
էլ գոյականաբար վերցված մյուս խոսքի մասերը, ընդ որում՝ թե՛
ուղիղ, թե՛ թեքված ձևերում:

Որպես ընդհանուր կանոն, նւն ավելացվում է ձայնավորով վեր-
ջավորվող բառերին, ինչպես՝ տարիատարին, զարիակ՝ էրին, կատու-
կատուն, քամիաքամին, միւսին, հերուհերուն, ծուռ-ծուն, լուռ-
լուն և այլն:

Ծանոթություն,- այս ձայնավորով վերջավորվող բառերի որոշյալ
առման ժամանակ ա ձայնավորը վեր է ածվում է-ի, ինչպես՝ փեսա-
փեսէն, ըրիւք ըրիւէն//ըլէն/, տըղա՝ տըղէն և այլն:/Այս մասին
տես § 188/:

225 Ը որոշիչ հոգը ավելացվում է բաղաձայնաֆառ բառերին,
ինչպես՝ հավահավը, քարաքարը, սէղանսէղանը, հաքըրահաքըրը,
էփէրէփէրը, պէփիրպէփիրը և այլն:

Ծանոթություն,- Բաղաձայնով վերջավորվող բառերը կարող են
չենթարկվել այս օրենքին /եթե նրանց հաջորդում է օժանդակ բայը,
էլ շաղկապը կամ ձայնավորով սկսվող որևէ այլ բառ/ և ստանալ Ը-ի
փոխարեն ն հոգը, ինչպես՝

Ըրիւքն էն մըտէլ մտալ՝ համ հալօղը կէրէլ, համ տանձէն
տարէլ: "Երեխաներն են մտել մառան՝ և խաղողը կերել, և տանձից
տարել":

Ծանոթություն,- Ը որոշիչ հոգը կրթմն շփոթվում է սեռականի
ը վերջավորության հետ, կթե միշտ չի արտասանվում շեշտը, օրի-
նակ՝ աղը օքուղ պէն ա "աղը օգտակար բան է"/ուղղական/:

Աղը մօնղը միր կալ "աղի կտորը վերցրու"/սեռական/:/Այս մասին
տես § 38/81/:

Ծանոթություն - Փոխառյալ բառերը նույնպես ենթարկվում են

այս օրենքներին: Օրինակ՝ Թախտաբիթի թախտաբիթին, ջիզմէ՝ ջիզմէն, յարայարէն, փարա՛փարէն, վափօրձվափօրը, կապիտձկապիտը և այլն:

226. Իբրև ստացական հոդեր են հանդես գալիս առաջին դեմքի համար ս-ն, երկրորդ դեմքի համար դ-ն կամ տ-ն, երրորդ դեմքի համար ք-ն կամ ն-ն: Եթե բառը վերջավորվում է ձայնավորով, ապա ս, դ//տ, ն հոդերը անմիջապես դրվում են ձայնավորներից հետո, ինչպես՝ մըտնիս "իմ մատանին", մըտանիդ "քո մատանին", մըտանին "նրա մատանին" և այլն: Իմ քընթըս սարէլ ա, "իմ քիթը սառել է" - իմ ստացականը դրվում է ս-ին զուգահեռ, ինչպես՝ իմ մըտ-նօվս, իմ ախչիկըս, իմ աըզիս:

Իսկ լաղաձայնով վերջավորվող բառերի և հոդերի միջև հանդես է գալիս հայերենի առանձնահատուկ ը ձայնավորը՝ իբրև նոր ավելա-ցող վանկի ձայնավոր, ինչպես՝ ախչիկըս "իմ աղջիկը", ուղղունզըս "իմ եղունգը" և այլն:

Ստացական հոդեր են ստանում նաև հոգնակի ձևերն ու թեքված բառերը, դերոյաների ուղիղ կամ հոլովված ձևերը, ինչպես՝ Բընթէրնիս ցուրտըն անէ սառել ա "քիթներս ցրտից սառել է": Էնգիզնէրը քաղէլ չիս, փըթալն էլ ուվանց էնգիզնին քաղում ըն իղի՝ "ընկույզներդ չես քաղել, բուրդն էլ իրենց ընկույզները քաղում էին": Այսինքն՝ ստացական հոդերը փոխարինում են նաև անձնական դերանունների սևռական հոլովաձևերին/մեր, ձեր, նրանց, իրենց/:

Ինչպես նշել ենք, հոդ են ստանում նաև անձնանուններն ու տեղանունները, ինչպես՝ Լօվօնըս Մըկըրըտ անէ տըրկանալու յա "Լևոնս Մկրտիչից տարիքով է": Կամ՝ Բուլղուրնիս մէնծ քաղաք էր, ամմա Իրէվանիդ հասնիլ չիր "Մեր Բուրղուրը մենծ քաղաք էր, ասկայն Երևանին չէր հասնի":

Ստացական հոդ ունեցող բառերը հոլովվելիս հոդը պահպանում են թեքված ձևերում, օրինակ՝

Ե Զ Ա Ե Ի Թ Ի Վ

Ուղղ. հաքըրըս	հէգիդ	տալըս
Սեն. հաքըրիս	հէգուդ	տալըս
Տր. հաքըրիս	հէգուդ	տալըս
Հայց. հաքըրիս	հէգուդ	տալըս
Բաց. հաքըրէս, հաքըրիս անէ	հէգուդ անէ	տալըս անէ
Դործ. հաքըրօվըս	հէգուվօվըդ	տալօվըս
Ներգ./հաքըրիս մէլ /	/հէգուդ մէլ/	տալըս մէլ

Հ Ո Յ Ն Ա Կ Ի Ք Վ Ի

Օ Ր Ի Ն Ա Կ Ն Ե Ր

Ուղղ. տալէրնիս	հաքըընէրնիս
Սեռ. տալէրնուս	հաքըընուս
Տր. տալէրնուս	հաքըընէրնուս
Հայց. տալէրնուս	հաքըընէրնուս
Բաց. տալէրնուս անէ	հաքըընէրնուս անէ
Գործ. տալէրովնիս	հաքըընէրովնիս
Ներգ. տալէրնուս մէջ	հաքըընէրնուս մէջ

Ա Ծ Ա Կ Ա Ն

Ա Ն Ո Ի Ն

227. Ինչպես ընդհանուր հայերենում, այնպես էլ Բուլղարի բարբառում որակական ածականի դրական աստիճանը բառի ուղիղ ձևն է, օրինակ՝ օքուդ մարթ "լավ մարդ", մէնծ քընթ "մեծ քիթ", ծիզիկ մառ կամ պիտիկ մառ "փոքրիկ մառ", քաշ տուն "ցածր տուն" կարմիր իրէս "կարմիր երես", էրկէն փէդ "երկար փայտ", ծիզիկ էնզո՛ւջ "փոքրիկ ալանջ", մավի շօր "կապույտ շոր", թուխ հավա "ամպամած եղանակ" և այլն:

228. Որակական ածականի բաղդատական աստիճանը կազմվում է երկու ձևով՝ իվէլի "ավելի" կամ դահա "ավելի" բառերի օգնութեամբ: Օրինակ՝ պիտիկ-իվէլի պիտիկ կամ՝ դահա պիտիկ

մէնծ-իվէլի մէնծ //դահա մէնծ

քաշ-իվէլի քաշ //դահա քաշ

մավի-իվէլի մավի//դահա մավի

օքուդ-իվէլի օքուդ//դահա օքուդ

կարմիր-իվէլի կարմիր//դահա կարմիր և այլն:

Երբեմն բաղդատական աստիճան է կազմվում ցուցական դերանվան բացառական Պըդվով, ինչպես՝ ծիզիկ-ընդրանէ ծիզիկ, օքուդ-ընդրանէ օքուդ և այլն:

Անծ ցուլյց տվող գոյականներից բաղդատական կազմելիս վերջվում է նրանց բացառական հոլովի երկրորդ տարբերակը՝ անէ ետադրութեամբ, օրինակ՝ էթո՛ւնը էվէտըն անէ խօւօք ա "Հարուսթյունը Ավետիսից խելոք է":

Պատահում են նաև քանց-քանգ բառի օգնությամբ կազմված բաղ-
դատական ձևեր, որոնք ավելի հազվադեպ են գործածվում և մեծ մա-
սամբ զրվում են անձ ցույց տվող գոյականների վրա, ինչպես՝
Ձէրթարը քանց ծիծիւրս խօլօք ա "Ձարդարը քորջիս խելոք է":

229. Որակական ածականների գերադրական աստիճանը կազմվում
է նկարագրական եղանակով՝ փըթավըն անէ "բուրդից, ամբող-
ջից" դերանվան վերլուծական բացառականի օգնությամբ, օրինակ՝

Հէգիս փըթավըն անէ օքուդ շօրէրն ա հաբէլ "մայրս բուրդից
լավ կամ ամենալավ շորերն է հագել":

Փըթավըն անէ պիտիկ մատըս ա ցավում "ամենափոքրիկ մատս
է ցավում":

Բացի գերադրական կազմելու այս տարածված ձևից, օգտագործ-
վում են նաև լափ փոխառյալ բառով կազմված ձևեր, ինչպես՝

Ուճանէսը լափ թէգա քէփէն ա հաբէլ "Հովհաննեսը ամենանոր
կոպան է հագել":

Թ Վ Ա Կ Ա Ն Ա Ն Ո Ւ Ն

230. Բուրդուրի բարբառում հանդիպում են թվականների հետև-
յալ տեսակները՝ քանակական, բաշխական, դասական, չափական և րազ-
մասնական:

231. Քանակական թվականներն են՝

մեկ-մին	տասն-տասը//տասսը/բարդությունների մեջ թըսնը/
երկուք-յօոկու	քսան-քըսան
երեք-իրէք	երեսուն-յէրասուն/բարդություններում յօսուն/
չորս-չօրս	քառասուն-քառասուն//քառսուն
հինգ-հինգ	հիսուն-իցցուն
վաք-վեք	վաթսուն-վաքցուն
սօթն-օխտը	70-յէթմիշ
ութն-ուլթը	80-սէքսէն
ինն-ինը//իննը	90-տօխտս
	հարիւր-հայիր//հէյիր

Եանթություն 1.-Բուրդուրի բարբառում զրաբարյան եօթն և
տասն թվականների վերջնահանգ ն-երը ընկնում են, սակայն բարդու-
թյուններում տասն բառի ն-ն վերականգնվում է, ինչպես՝ թըսնըմին,

Յըսնըյօոկու, Յըսնըիրէք և այլն:

Ծանոթություն 2., Հայտնի է նաև այն փաստը, որ Արևմտյան Անատոլիայում զանվող համարյա բոլոր հայ զաղթօջախներում յոթանասուն, ութսուն, իննսուն թվականների հայերեն անվանումները փոխարինված են թուրքերեն յէթմիշ, սէքսէն, տօթասն բառերով: Ինչու՞ հատկապես այս երեք տասնավորների անվանումներն են փոխ առնվում, իրարից անկախ զոյուլթյուն ունեցող կամ կղզիացած հայ զաղութներում: Բացահայտման կարոտ հարց է սա: Թերևս հայերենից ավելի կարճ լինելն է հիմնական պատճառը, որովհետև դրանց հայերեն նմանիշներն իրոք որ մեկ-երկու վանկով ավելի են փոխառյալներից:

232. Բարդ թվականները ընդհանուր հայերենի նման կազմվում են նախադաս տասնավորներից և հետադաս միավորներից, այսպես՝ Յըսնըմին "տասնմեկ", Յըսնըյօոկու "տասներկու", Յըսնըիրէք "տասներեք", Յըսնըչօրս "տասնչորս", Յըսնըհինգ "տասնհինգ", Յըսնըվէյ "տասնվեց", Յըսնըյօթ//Յըսնըօխտը "տասնյոթ", Յըսնըութ "տասնութ", Յըսնըինը "տասնինը", յօսսունյօոկու "երեսուներկու", իցյուլնօխտը "հիսունյոթ" և այլն:

Իսկ փոխառյալ տասնյակներիժ կազմվող բարդ թվականները ունենում են նրկու ձև. կամ՝ տասնավորները թուրքերեն, միավորները հայերեն կամ՝ երկուսն էլ թուրքերեն, որոնք սակայն, քիչ են զործածական: Այսպես օրինակ՝ յէթմիշյօոկու կամ յէթմիշիքի "յոթանասուներկու" սէքսէնմին կամ սէքսէնքիր "ութսունմեկ", տօթասնինը կամ տօթասնտօթուլ "իննսունինը" և այլն:

233. Բանական թվականները հոլովվելիս ենթարկվում են զոյականների ի/ը/ հոլովման օրենքներին, այսպես՝

Ե Զ Ո Կ Ի Թ Ի Վ

Ուղղ.	մինը	Յըսնըյօոկուն
Սեռ.	մինին	Յըսնըյօոկուվին
Տր.	մինին	Յըսնըյօոկուվին
Հայց.	մինը	Յըսնըյօոկուն
Բաց.	մինին անէ	Յըսնըյօոկուվուն անէ
Գործ.	մինօվ	Յըսնըյօոկուվօվ
Ներգ.	մինում, մինին մէլ	Յըսնըյօոկուվում
	մինուվում	

234. Բաշխական թվականների իմաստ են դրսևորվում կրկնված քանակականները, օրինակ՝ մին-մին "մեկական", յօոկու-յօոկու "երկուական", իրէք-իրէք "երեքական", հինգ-հինգ "հինգական"

իցյուն-իցյուն "հիսունական" և այլն:

235. Բազմապատկան թվականների գործածությունը քիչ է տարածված: Այդ իմաստով են օգտագործվում ապկ բառից և քանականներից կազմված մենասակ, միասակ, չորսասակ, հինգասակ բառերը: Պիւրթու կըծըկը փըթէլի վախըմ հէսաբընք անըմ հիմբէրում ինք միսասկ, յօսկուսակ:

236. Չափական թվականները կազմվում են նույնպես քանականներից -նօց ածանցի միջոցով: Երբեմն -նօց ածանցը արմատին է կապվում ա իողակապի միջոցով, երբեմն՝ առանց իողակապի: Օրինակ՝ մինընօց//մինա-նօց, հինգանօց, վեցանօց, հիզգէրնօց//հիզգէրանօց և այլն:

Երբեմն էլ օգտագործվում են թուրքերենից փոխառյալ չափականները, օրինակ՝ բինլիք "հազարանոց" /այսպես է կոչվում նաև լիտրանոցը/ բէշի բիրլիք, ,ոսկեղրամի տեսակ":

Մին բէշի բիրլիքը հինգ հիզգէրնօց ա, գիտըմ էն:

237. Դասական թվականները կազմվում են փոխառյալ ինչի//ընչի "որորդ" մասնիկով, որը կցվում է վերջից քանական թվականներին: Օրինակ՝ յօսկունչի "երկրորդ", իրէքընչի "երրորդ", չօրսընչի "չորրորդ", հինգինչի "հինգերորդ", օխտընչի "յոթերորդ" և այլն:

Ծանոթություն. ...Առաջին դասականի իմաստով օգտագործվում են թե՛ փոխառյալ բիրինչի, թե՛ այդ համաքանությամբ ստեղծված մինինչի ձևերը, ինչպես նաև էոչին, էոչինէկ բառերը, որոնցից էոչին բառը ավելի շուտ ձեռք է բերել մակըրայկան իմաստ և գործածական է էոչին հէդ "առաջին տեղում" և նման այլ կապակցություններում, իսկ մյուսը՝ էոչինէկը, գործածական է իբրև գոյական և նշանակում է "անդարանիկ զավակ": Բիրինչի փոխառյալ դասականը ունի նաև "առաջնակարգ", "անգերազանց" իմաստները: Օրինակ՝

Ջէքէրը բիրինչի պիւրթուլէի ա "Ջաքարը առաջնակարգ կամ անգերազանց քրուա է":

238. Դասական թվականները հոլովվում են ու հոլովմամբ: Օրինակ՝

Ե Զ Ա Կ Ի Թ Ի Վ

Ուղղ. օխտընչին

Սեռ. օխտընչուն

Տր. օխտընչուն

Հայց. օխտընչին

Բայց. օխտընչուն անէ.

Գործ. օխտընչով

Ներգ. օխտընչում, օխտընչուն մէջ

239. Անձներական թվականների իմաստը դրսևորվում է քանակականներին և էլ շաղկապի ֆորադրությամբ, ինչպես օրինակ՝ իրէքն էլ "երեքով" /երեքական/, յօդուկն էլ "երկուսով" և այլն:

Դ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն

240. Դերանունները Բուրդուրի բարբառում քական առատ են: Երբեմն մի քանի տարբերակներով են ներկայանում ցուցականները: Նույնիսկ ֆարցական դերանունների մեջ ֆանդիպում ենք զրաբարյան շրջանից մնացած մի քանի քարայած հոլովածների, որոնք ըստ ակադ. Հ. Աժառյանի՝ նախազրաբարյան ի ֆարցականի սեռական և զործիական հոլովածներն են եւ ղել:

Դրանք են՝ է՛ր "ինչու" /սեռական հոլով/ և ի՛վ "ուր" /զործիական հոլով/:

Մեր կարծիքով, բարբառում առկա թի՛ "ինչու" ֆարցականը նույնպես կապ ունի այդ նախազրաբարյան ի դերանվան հետ, որից առաջ ետնալեզվային թ ֆնչյունն է ավելացել:

241. Անձնական դերանուններն են՝ յէսսես, աուսզու, էն "նա" ինքը: Հոգնակի թվի ֆամար՝ մէնքամենք, տիւքսզուք, ընդ/ր/անք//էնդ/ր/անք//ընդոնք "նրանք", հւվթնք//ուէրթնքսիւրենք "իրենք" :

Անձնական դերանուններից երրորդ դեմքի եզակին քոի է առնված ցուցականների երրորդ դեմքից:

Անձնական դերանունների հոլովման պատկերն է՝

Ե Զ Ա Կ Ի Թ Ի Վ

Ուղղ. յէս	աու	էն
Սեռ. իմ	քու	էնդ/ր/ան
Տր. ինձ	քէզ	էնդ/ր/ան
Հայց. ինձ	քէզ	էնդ/ր/ան
Բաց. ինձանէ, իզնէն	քէզանէ, քէզնէն	էնդ/ր/անէն
Գործ. ինձանով, իզնով	քէզանով, քէզնով	էնդրանով
Ներգ. ինձանըմ, իզնում	քէզանըմ, քէզնում	էնդրանում

Ուղղ. ինքը	Բաց. ուէրթնէն, հւվթնէն
Սեռ. ուէրթն, հւվթն, ումէն	Գործ. ուէրթնով, հւվթնով
Տր. ուէրթն, հւվթն, ումէն	Ներգ. ուէրթնում, հւվթն մէլ,
Հայց. ուէրթն, հւվթն, ումէն	ուէրթն մէլ

1. Հայց. ուէրթն, Լիակատար քերեկանություն հ. Լ., ֆառոր 2-րդ,

Հ Ո Ր Ն Ա Կ Ի Ք Ի Վ

Ուղղ.	մէնք	տուք
Սեռ.	մէր	ծէր
Տր.	մէզ	ծէզ
Հայ.	մէզ	ծէզ
Բայ.	մէզանէն, մէզնէն	ծէզանէն, ծէզնէն
Գործ.	մէզանօվ, մէզնօվ	ծեզանօվ, ծէզնօվ
Ներգ.	մէզանում, մէզնում	ծէզանում, ծէզնում

Ուղղ. էնդրանք, ընդրանք, ընդանք, ընդօնք
 Սեռ. էնդրանց, ընդրանց, ընդանց, ընդօնց
 Տր. էնդրանց, ընդրանց, ընդանց, ընդօնց
 Հայ. էնդրանց, ընդանց, ընդրանց, ընդօնց
 Բայ. էնդրանցանէն, ընդրանցանէն, ընդրանցանէն, ընդօնցանէն
 Գործ. էնդրանցօվ, ընդրանցօվ, ընդանցօվ, ընդօնցօվ
 Ներգ. էնդրանցում, ընդրանցում, ընդանցում, ընդօնցում
 Ուղղ. հւրանք, ուվանք
 Սեռ. հւրանց, հւվէնց
 Տր. հւրանց, հւվէնց
 Հայ. հւրանց, հւվէնց
 Բայ. հւրանցանէն, հւվէնցանէն, հւվէնցէն
 Գործ. հւրանցօվ, հւվէնցօվ
 Ներգ. հւրանցում, հւվէնցում

Ինչպես նշվել է, ցուցական էն դերանունը միաժամանակ օգտագործվում է իբրև երրորդ դեմքի անձնական դերանուն, որից էլ կազմվում են հոգնակի թվի տարբերակները: Էն-ը առաջացել է զրաբարյան այն ձևից՝ այս է հնչյունափոխությամբ / տես § 58/: Էն-ի հոգնակին և սեռական ձևերն էլ ծագում են զրաբարյան սեռականի այն ձևից՝ հեռլայլ փոփոխություններով. նախ բարբառի հնչյունափոխական օրենքների համաձայն այ-ը դարձել է է, այնքանից, ապա ն և ը ժայնորդների միջև ավելացել է դ պաթականը՝ էնրաէնդր, որի վրայով էլ էսիսը հընչյունափոխությամբ ը ժայնորդի պահանջմամբ կամ անկմամբ ստեղծվել են բազմաթիվ այլ տարբերակներ, ինչպես՝ ուղղական՝ էն, սեռական՝ էնդրա// ընդրա//ինդրա, էնդա//ընդա//ինդա, էնդուր//ընդուր և այլն:

Նույն ձևով էլ զրաբարյան այսր, այդր ձևերից առաջացել են բար-

քառի առաջին և երկրորդ դեմքերի համապատասխան սեռականներն ու
հոգնակիները: Ցուցականների բազմաթիվ տարբերակների առկայությունը
սլայմանավորված է ոչ միայն ժայնավորների կրած հնչյունափոխություն-
ներով, այլև բաղաձայնների հավելումներով ու անկումներով, ուր
վերջին հաշվով անփոփոխ են մնում փաստորեն միայն դիմորոշ ս,դ//
տ, ն հնչյունները:

242. Բարբառի ցուցականներն են՝ եզակի թվի համար էսաայս, էդա
այդ, էնաայն, հոգնակի թվի համար՝ էստրանք//ըստրանք//իստրանք,
էնդրանք//ընդրանք//ինդրանք, էդրանք//ըդրանք//ըղանք//ըղօնք և այլն:

Հոգնակի ցուցականները կազմվում են եզակի սեռականներից: Պարզ
կամ արմատական ցուցականներին ավելացնելով տեղ, ծև, չափ, ժամանակ
ցույց տվող քառեր՝ կազմվում է մակբայական կիրառություն ունեցող
ցուցականներ: Իբրև որոշիչ, ցուցականները դրվելով գոյականների
վրա, չեն հոլովվում, իսկ դերանվանաբար հոլովվելիս վերջին երեք
հոլովներում/բացառական, գործիական, ներգոյական/ ունենում են
գոյականներին նման վերջավորություններ: Ցուցական դերանուններն
հոլովվում են այսպես՝

Ե Զ Ա Կ Ի Թ Ի Վ

Ուղղ.	էս
Սեռ.	էստ/ր/ա/ն/ , ըստ/ր/ա/ն/
Տր.	էստ/ր/ան , ըստ/ր/ան
Հայց.	էստ/ր/ան , ըստ/ր/ան
Բաց.	էստ/ր/անէն, ըստ/ր/անէն
Գործ.	էստ/ր/անօվ, ըստ/ր/անօվ
Ներգ.	էստ/ր/անըմ, ըստ/ր/անըմ

Հ Ո Գ Ն Ա Կ Ի Թ Ի Վ

Ուղղ.	էստ/ր/անք	// ըստ/ր/անք
Սեռ.	էստ/ր/անց	// ըստ/ր/անց
Տր.	էստ/ր/անց	// ըստ/ր/անց
Հայց.	էստ/ր/անց	// ըստ/ր/անց
Բաց.	էստրանցանէն	// ըստ/ր/անցանէն
Գործ.	էստրանցօվ	// ըստ/ր/անցօվ
Ներգ.	էստ/ր/անցըմ	// ըստ/ր/անցըմ

ինչպես նշում է ակադեմիկոս Ա. Ղարիբյանը, էս, էտ, էն ցուցականն են չի հոլովման հիմքում ընկած է զրաբայան դա ցուցական դերանվան սեռական դորա ծած: 1 Բուրգուրի բարբառում դորա սեռականից առաջ կըլլում են նաև էս, էդ, էն արմատական ցուցականները, որոնք բարբառի հնչյունափոխական օրենքներով փոփոխվելուց հետո ստանում են հոլովման տարակուսում ցույց տված տեսքը:

243. էս, էդ, էն ցուցականների վրա ավելացնելով տեղ, յան "կողմ" բառերը կազմվում են մակբայական կիրառություն ունեցող, տեղ մասնանշող ցուցականներ, որոնք հանդես են գալիս ոչ միայն բազմաթիվ տարբերակներով, այլև հոգնակի ձևերով: Օրինակ՝ էստեղ/էստե/ըստեղ/ըստե//իստե//էստի և այլն: Հոգն. ըստեղանք//իստեղանք և այլն:

Հոլովվելիս տեղ ցույց տվող դերանունների ընկած դեմ կամ վերակազմվում է, կամ փոխարինվում յ ժայնորդով: Եզակի թվում ենթարկվում են ի հոլովման, հոգնակի թվում՝ ու կամ ց:

Տեղ ցույց տվող դերանունների հոլովման պատկերն է՝

Ե Ջ Ա Կ Ի Թ Ի Վ	Հ Ո Գ Ն Ա Կ Ի Թ Ի Վ
Ուղղ. իստե, ըստե, էստի, էստեղ	ըստեղանք
Սեռ. իստեյի/ն/, ըստեյին, էստիյին, էստեղին	ըստեղանց
Տր. իստեյին, ըստեյին, էստիյին, էստեղին	ըստեղանց
Հայց. իստե, ըստե, էստի, էստեղ	ըստեղանք
Բաց. իստիյան, ըստեյան, էստիյան, էստեղան	ըստեղանց անէ
Գործ. իստեյով, ըստեղով, էստեղով	ըստեղանքով
Ներգ. իստեյում, ըստեղում, էստեղում	ըստեղանքում

244. 24 ցույց տվող ցուցականները կազմվում են արմատական ցուցականներից հէնց, մանց /"պէս", "ծառով"/ բառերի կցումով: Այս դեպքում նույնպես հնչյունափոխական զանազան երևույթների պատմաբանությունը, յուրաքանչյուր դեմքի համար առաջանում են 7-8 և ավելի տարբերակներ: Այսպես օրինակ՝ իսէհէնց/ըսէհէնց//իստէհէնց/սէհէնց/սէնց/ըսէնց//էսման/ց/ //ըսման/ց/ և այլն: Նույն տարբերակներն ունենք երկրորդ և երրորդ դեմքերի համար:

Ծանոթություն. -իբրև ձև ցույց տվող ցուցական օգտագործվում է նաև հէնց բառը, որը վերոհիշյալ ցուցականներից է առաջացել "մաշվելով": Թեև նա թվում է անդեմ, սակայն խոսքի մեջ օգտագործվելով օժանդակ բայի երրորդ դեմքի եզակի թվի հետ՝ փոխարինում է երրորդ դեմքի ցուցականներին, օրինակ՝

1. Ա. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 158:

«Ծառէն վեր յէկ, թէ՛՛օչ թակօլում «Ծառից վայր իջիր, թե՛ չէ կծեծեմ»:

«Հէնց ի, դէ հէնց ա, վեր չիմ կ'էլու «Որ այդպես է՝ այդպես է, չեմ իջնելու»:

Ծանոթութիւն 1.— 24 ցուլց տվող վերոհիշյալ ցուլականների արտասանութեան ժամանակ ոմանք վերջին խուլ պայթական ց-ն արտասանում են իբրև ժայնեղ ծ, օրինակ՝ նէհէնծ, տէհէնծ, իսէհէնծ, ինէհէնծ և այլն:

Ծանոթութիւն 2.— Այս ցուլականները կարող են զործածվել նաև հոգնակի թվով, ինչպես՝ սէհէնցնին, տէհէնցնին, նէհէնցնին:

Ծանոթութիւն 3.— Հէնց «պես» բառից վօնցընէ «ինչպես, ինչ ծեւով» բառի համաբանութեամբ կազմվել է հէնցընէ հարաբերական-հարցականը:

245. 2փ ու քանակ ցուլց տվող ցուլականները բաղադրվում են էս, էդ, էն պարզ դերանուններից և չանք «չափ» բառից կամ՝ փոխառյալ դժր բառից, որն առաջացել է թուրքերենի դադար «չափ» բառից՝ դա վանկի անկումով, օրինակ՝ էսչանք, էդչանք, էնչանք, իսդժր, իդժր, ինդժր: Կամ կազմվում է քան-ի բաղադրմամբ, օրինակ՝ էսքան, էդքան, էնքան և այլն:

2փ ու քանակ ցուլց տվող ցուլականները եղակի թվում հոլովվում են ի, իսկ հոգնակի թվում՝ ու հոլովմամբ:

246. Ժամանակ ցուլց տվող ցուլականները նույնպես բաղադրվում են պարզ ցուլականներից և ժամանակ նշանակող որևէ բառից, ինչպես՝ օր, վախա «ժամանակ», չափ «պահ», հէտ «անգամ» և այլն:

Այս բարդութիւնները, ժամանակ ցուլց տվող գոյականների նման, հոլովելիս ենթարկվում են վա հոլովման կանոններին և չեն թեքվում դերանվանական հոլովմամբ: Օրինակ՝ ուղղ.-էսհէտ, էսվախա, սեռ.-էս-հեովա/ն/, էսվախովա/ն/ և այլն:

247. Բուրդուրի բարբառի ստացական դերանուններն են՝ իմ, քու, ընդ/ր/ա, մէր, ծէր, ընդրանք, էստրա, ըստրա, էստրա, էնդրա, սեռականներից կազմված հոգնակի ստացականները՝ իմօնք, քուվօնք/ըրուօնք, մէրօնք, ծէրօնք, ուրանց, ուվանց և այլն: Ստացական դերանունները ենթարկվում են ի հոլովման: Ստացականներն իբրև փոխանուն զործածվելիս ստանում են ն-ը կամ ը հոդը: Օրինակ՝ իմը, քունը, մէրը, ծէրը, ընդրանը, իմօնը, քուվօնը, մէրօնը, ուրանցը, ուվանցը, ընդրանցը և այլն:

Ստացական դերանունների նույնանուն պատկերներ է՝

Եզրակ	Թիվ	Հոգնակ	Թիվ
Ուղղ.	Իմ/ը/ը	մեր/ը/	
Սեռ.	Իմի/ն/	մերի/ն/	
Տր.	Իմին	մերին	
Հայց.	Իմը	մերը	
Բայ.	Իմին անէ, Իմինէն	մերին անէ, մերինէն	
Գործ.	Իմով /ը/	մերով/ը/	
Ներգ.	Իմինում	մերինում	

Ստացական դերանունները սովորաբար անդիմա են գալիս իբրև հատկացուցիչներ, իսկ նրանց հատկացյալներն ստանում են որոշիչ հոգեր, ինչպես՝ Իմ կ'իրը, բու տըղէն, մերոնց թանդըրը և այլն: Իսկ եթե ստացական հատկացուցիչը չի դրվում, ապա ստացական հոգերն անցնում են հատկացյալին, ինչպես՝ կ'իրըս, ըրիւղ/ը/իւղ, թանդըրը և այլն:

248. Բուրդուրի բարբառի փոխադարձ դերանուններն են՝ ուրուր "իրար", մինմօնու "մեկմեկու" /վերջինս անդիպում է նաև մինմօմինի ձևով/:

	Փոխադարձ դերանունների	հոլովման պատկերներ է՝
Ուղղ.	ՌւրՌւր	մինմօնու
Սեռ.	ՌւրՌւր	մինմօնու
Տր.	ՌւրՌւր	մինմօնու
Հայց.	ՌւրՌւր	մինմօնու
Բայ.	ՌւրՌւրըն անէ	մինմօնուն անէ
Գործ.	ՌւրՌւրով	մինմօնով
Ներգ.	ՌւրՌւր մէլ	մինմօնու մէլ

249. Հարցական դերանուններն են՝ վօնց, Ինչ, ուր, վր, էր// էրի, քա՛նը, Ի՞նչթար "ինչչափ, ինչպե՞ս", ի՞նչ "ուր", օ՞վ, ի՞նչեյ"որտեղ" վօնցընէ "ինչպես", ինչընէ "ինչ կերպ", ինչ, "ինչու", ումում "ում", ումանց "ում" և այլն: Ում-ումու հարցականը փոխարինում է ովքե՛ր-ի/ում/ հարցականին: Իրրև հարցական է օգտագործվում նաև վօրմին բառը: Իբրև օվ դերանվան հոգնակի՝ օգտագործվում է ումօնք ձևը: Հարցական դերանունները նույնվում են հետևյալ կերպ՝

Ուղղ.	օ՞վ	ի՞նչ/ը/
Սեռ.	ու՞մ	ինչի՞ն/
Տր.	ու՞մ	ինչին
Հայ.	ու՞մ	ինչին
Թայ.	ումա՞նէ/ն/	ինչին անէ
Գործ.	ումա՞նօվ	ինչօվ
Ներգ.	ու՞մ մէլ	ինչի՞ն/ մէլ

Քա՞նը "քանի" հարցականի հոգնակին կազմելիս հանդես է գալիս հոգնակերթից առաջ կորած ս-ն, երբեմն դա վերականգնվում է նաև եզակի ուղղականում և հայցականում, օրինակ՝ քա՞նըսը միակալար "Քանի՞սը վերցրիր": Հոգնակի թվում գործիական հոլովի վերջավորությունն է օվ, սակայն նրանից առաջ նի հոգնակերադ փոխարինվում է նէր-ով: Եզակի թվի սեռական-տրական հոլովներում և նրանցից կազմված ձևերում ու հոլովիչի ու արմատական ը ձայնավորի միջև հանդես է գալիս վ շփականը: Քա՞նը և քա՞նըսնի հարցականները ենթարկվում են ու հոլովման: Օրինակ՝

	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
Ուղղ.	քանըսը	քանըսնին
Սեռ.	քա՞նըվուն	քանըսնուն
Տր.	քա՞նըվուն	քա՞նըսնուն
Հայ.	քա՞նըսը	քա՞նըսնին
Թայ.	քա՞նըվուն անէ	քա՞նըսնուն անէ
Գործ.	քանըվօվ	քանըսնէրօվ
Ներգ.	քանըվուն մէլ	քանըսնէ՞րուն մէլ

Հարցական դերանուններից մի քանիսը /իի՞ "ինչու", է՞ր//է՞րի "ինչու", ի՞վ /ի՞վ է/ "ուր" և ու՞ր /քարացած ձևեր են և ոչ հոլովվում են, ոչ էլ հոգնակի կազմում:

250. Սովորաբար ընդունված է ասել, որ հարաբերական դերանունները նույն հարցականներն են՝ առանց հարցական նշանի, սակայն Բուրդուրի բարբառում ոչ բոլոր հարցականներն են հարաբերականների դերում հանդես գալիս: Օրինակ՝ է՞ր //է՞րի, ի՞վ, իի՞ և նման հարցականները հարաբերականների դերում չեն հանդիպում: Մնացածները հոլովվում են հարցականների նման:

251. Որոշյալ դերանուններն են՝ փըթավը "բոլորը, ամբողջը" ամէ՞նը //ամմէնը, /անծի առման դեպքում նաև ամէնքը/ էնմինը "մյուսը" և փոխառյալ բութունը, սաղը "ամբողջը" բառերը: Որոշյալ դերանուններն են՝

ըը հոլովվում են ի հոլովմամբ, օրինակ՝

Ուղղ.	փըթավը	սաղը
Սեռ.	փըթավին	սաղին
Տր.	փըթավին	սաղին
Հայց.	փըթավը, փըթավին	սաղը, սաղին
Բաց.	փըթավին անէ	սաղին անէ
Գործ.	փըթավով	սաղով
Ներգ.	փըթավին մէջ	սաղին մէջ

Այս դերանունները կազմում են նաև հոգնակի ձևեր, ինչպես՝ փըթավ-
փըթավներ, սաղ-սաղէրը:

252. Անորոշ դերանուններն են՝ մին/ը/ "մի", մէկը "մեկը",
ուրուշը "ուրիշը", էսինչ "այսինչ", էդինչ "այդինչ", էնինչ "այն-
ինչ" և փոխառյալ ֆլանք՝ասը "ոմն մեկը": Երբեմն անորոշ դերանուն-
ները հանդիպում են նաև հոգնակի ձևերով, ինչպես՝ ուրուշաուրուշ-
ներ, մինըամիններ, ֆլանք՝ասըաֆլանք՝ասներ:

Անորոշ դերանունների հոլովման պատկերն է՝

	Եզնակի թիվ	Հոգնակի թիվ
Ուղղ.	ուրուշը	ուրուշներ
Սեռ.	ուրուշին	ուրուշներ
Տր.	ուրուշին	ուրուշներ
Հայց.	ուրուշը, ուրուշին	ուրուշներ, ուրուշներ
Բաց.	ուրուշին անէ	ուրուշներ անէ
Գործ.	ուրուշով	ուրուշներով
Ներգ.	ուրուշին մէջ	ուրուշներ մէջ

253. Բուրդուրի քարքառի ժխտական դերանուններն են՝ օնչ օվ "ոչ
ոք", վօչ մին "ոչ մեկը", հէշմին "ոչ մեկը": Վերջին ժխտականը
կազմված է փոխառյալ հիշահէշ "ընավ" և մին քառերի քաղաղրումից:

Ժխտական դերանունները հոլովվում են ի հոլովմամբ: Օրինակ՝

	Ե Ջ Ա Կ Ի	Թ Ի Վ
Ուղղ.	օնչ օվ /ը/	վօչ մինը
Սեռ.	ոնչ օվի/ն/	վօչ մինի/ն/
Տր.	օնչ օվին	վօչ մինին
Հայց.	օնչ օվին	վօչ մինին

Բայ.	օնչ օվին անէ	վօչ մինին անէ
Գործ.	օնչ օվօվ	վօչ մինօվ
Ներգ.	օնչ օվին մէշ	վօչ մինում, վօչ մինին մէշ

Ամփոփելով դերանուներին հոլովման պատկերը՝ զալիս ենք այն եզրակացություն, որ հին հայերենի դերանվանական հոլովման առանձնահատկությունները Բուրդուրի բարբառում համարյա թե չեն պահպանվել /եթե նկատի չունենանք պարզ ցուցականների և անձնական դերանունների սեռական-տրական հոլովները/: Ամենուրեք դերանունները ենթարկվել են գոյականների հոլովման սխտեմի օրինաչափություններին, որով և ստեղծվել է բարբառի ընդհանուր խոսքի մասերի համար հոլովման միօրինականացում:

Բ Ա Յ

255. Հին հայերենի բայական չորս լծորդությունների դիմաց Բուրդուրի բարբառն ունի միայն երկուսը՝ ի և ա, եթե հաշվի չառնենք անկանոն խոնարհում ունեցող երեք միավանկ բայեր, որոնց անորոշը լինում է էլ վերջավորությամբ, ինչպես՝ լէլ ,,լալ'', կյէլ ,,գալ'', նէլ ,,գնալ'':

Բուրդուրի բարբառում ամենակենսունակ և ամենաուժեղ լծորդությունն է ի-ն, որն իրեն է ենթարկել է լծորդության ընդհանուր բայերը, ինչպես նաև ու լծորդության պատկանող չորս բայեր՝ առնուլ-առնիլ, ուռնուլ-ուռիլ, թողուլ-թողիլ, լնուլ-լիցիլ, ինչպես նաև մեկ տասնյակից ավել ա լծորդության բայեր, օրինակ՝ լուանալ-վիլէնիլ, արքենալ-հարփիլ, մոռանալ-մըրանիլ, արժենալ-աժիլ, ուզենալ-ուզիլ և այլն:

Ա լծորդությունը, կորցնելով իր խմբի բայերի մի մասը, նույնպես կարողացել է մի քանի բայեր ,,նվաճել'' այլ լծորդություններից, օրինակ՝ է լծորդության պատկանող բայերից. ալեւորել՝հիլէվօրնալ, գտանել՝գրիթանալ և ի լծորդությունից՝ գգուլիլ՝գըվզալ, երևիլ՝աիրէվալ, սարսափիլ՝ սըրսըփալ և այլն:

Լծորդությունների փոխանցման երևույթը խորթ չի եղել նաև հին հայերենի համար. մի շարք բայեր զրաբարում հանդես էին գալիս թե՛ ու, թե՛ ի լծորդությունների առկա:^{1/} Ընդհանուր հայերենի զարգացման միտումն է եղել քերականական բազմաթիվ օրենքների միօրինականացումը: Այդ միտումը գործել է ոչ միայն զրական լեզվում, այլև շատ բարբառ-

1. Ա. Աբրահամյան, զրաբարի յեռնարկ, Երևան, 1958, էջ 114-115:

ներում, դրանց թվում էլ Բուրդուրի բարբառում: Ամենատարածված լծոր-
դությանը՝ ի-ին է պատկանում բարբառի բոլոր բայերի շուրջ ութսուն
ալիսը, իսկ ա լծորդության տակ մնացել են միայն սակավաթիվ բնածայ-
նական կամ բայարմատների կրկնությամբ կազմված և այլ կարգի չեզոք
սեռի բայեր, ինչպես օրինակ՝ մըրմըրալ , ,մոմոալ'' , իրէվալ , ,երաւլ'' ,
ձօղձօղալ , ,հոտոալ'' և այլն:

Լծորդություններից բացի, փոփոխություններ են կառարվել նաև
բայածանցներում: Օրինակ՝ են սոսկածանցը առանց բացառության փոխ-
րինվել է ան-ով, ինչպես՝ մոտենալ՝ մոտանալ, կարենալ՝ կարանալ, /կա
և կարալ ձևը, ուր ան սոսկածանցը ընկնում է/, պարծենալ՝ պարծանալ և
այլն: Երբեմն էլ սոսկածանցն ընկնում է, օրինակ՝ արծենալ՝ արծիլ, ար-
րենալ՝ արբիլ, ուզենալ՝ ուզիլ և այլն:

Դ Ե Ր Բ Ա Յ Ն Ե Ր

256. Բարբառի դերբայներն են՝ անորոշ, անկատար, ապառնի, վաղա-
կատար, հարակատար, ենթակայական, ըղծական կամ ժխտման:

257. Անորոշ դերբայը եղանակային ձևերի կազմությանը չի մասնակ-
ցում: Արգելական հրամայականի որոշ տարբերակներ, կարելի է ենթադրել,
որ կազմված են անորոշից, օրինակ՝ ասիլ մը, նըսաիլ մը և այլն:

Որպես փոխանուն, անորոշ դերբայը հոլովվում է ի կամ ու հոլով-
մամբ:

Մեծ է անորոշ դերբայի կիրառությունը նախադասության մեջ, օրի-
նակ՝

ա/ Անորոշ դերբայի տրական հոլովը հարադրվելով պէսդան բառին /որը
կազմված է հայերեն՝ պես և փոխառյալ դան բաղադրիչներից/, ցույց է
տալիս ենթակայի կատարած գործողության անմիջապես նախորդող մեկ
այլ գործողություն: Օրինակ՝

Վափօրը կաննիլուն պէսդան՝ մէնք վէր յէկանք , ,Շոգենալը /կամ
շոգեբարը/ կանգնելուն պես՝ մենք ցած իջանք'' :

Կամ՝ Ըիէն շունու տէնալուն պէսդան՝ լէցալ , ,Շանը տեսնելուն
պես երեխան լաց եղալ'' :

բ/ Փոխառյալ իբէն , ,ելիս'' մասնիկը, կցվելով անորոշ դերբային,
ցույց է տալիս նախադասության ենթակայի կատարած հիմնական գործողու-
թյանը զուգահեռ կատարվող մեկ այլ գործողություն: Օրինակ՝ Սոխիէն
յանց կէնալիբէն միմիրիս տէսա , ,Փողոցից անցնելիս քողջս տեսա'' :

Սա համապատասխանում է արդի հայերենի անկատար դերբայի չիս մաս-
նիկով կազմվող տարբերակին:

զ/ Անորոշ դերբայի գործիական հոլովը դառնում է ձևի պարզագույն կամ միջոցի խնդիր: Օրինակ՝ Կյիր կյիրիւօվ ընդ մարթ թէրնմ , ,Գիր գրելով են մարդ դառնում” :

դ/ Անորոշ դերբայի քայտական հոլովը ընթացակալական դերբայի կի-րառութիւն ունի, օրինակ Աշիւն ֆօդֆօդիլէն կիկիշտանա , ,Խոհարարը հոտոտելով կկշտանա” :

258. Անկատար դերբայի մասնիկն է ում /ըմ/, հազվադեպ՝ իս: Բա-յերի մեշող մեծամասնութեան անկատարը ձևավորվում է ում մասնիկով: Միավանկ չորս բայերի՝ կյէլգալ, նէլգնալ, լէլգալ, տալտալ ան-կատարը հիմնականում ձևավորվում է երկրորդ՝ իս տարբերակով, օրինակ՝ կյէլգալէլիս, նէլգնէլիս , ,գնալ” , լէլգալէլիս, տալտալիս:

Ծանոթութիւն.- Գնալանէլ բայի երկրորդ տարբերակի անկատարը կազ-մովում է ում մասնիկով, օրինակ՝ քընում ըմ իղի , ,գնում էի” : Լալ-լել բայը հիմնականում օգտագործվում է հարադրութիւնների մեջ, օրի-նակ՝ լէց ինիլ, լէց ըմ ինում և այլն:

Անկատար դերբայը մասնակցում է եղանակային ձևերի կազմութեանը, որով էլ դրսևորվում են սամանային եղանակի ներկայի և անցյալի ան-կատար ժամանակները:

